«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՄՐԱԿԻՑԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2024-2029թթ.

# Ներածություն

*Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք*
*/ՀՀ Սահմանադրության հոդված 39/*

«Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար»:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածությունն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրական ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

«ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2024-2029թթ. ծրագիրը մշակվել է.

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908,
- «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=175541,
- «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի https://www.arlis.am/documentview.aspx?docid=168835,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի

- հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 399-Ա հրամանի՝ https://escs.am/files/files/2023-04-26/9ff191eceab2fd0dd09f14fdbd406b88.pdf

օրենքներին, փաստաթղթերին, հիմնադրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դրանցում առկա հիմնախնդիրները:

Ծրագիրը նպատակաուղղված է իր ապագան կերտելու վստահությամբ համակված անձի ձևավորմանը:

Յուրաքանչյուր սովորողի՝

1. մտավոր, հոգևոր, ֆիզիկական զարգացմանը,
2. մարդկային արժանապատվության պահպանմանը,
3. իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը,
4. ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը,
5. մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը,
6. ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը,
7. որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է: Դպրոցի զարգացման ծրագրի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգացման տեսլականը:

Այս ուղղությունները խմբավորել եմ հետևյալ ձևով.

- Աշակերտական համակազմի զարգացում
- Մանկավարժական համակազմի զարգացում
- Կրթական միջավայրի բարելավում
- Համագործակցության զարգացում:

Իրավիճակի վերլուծությունն ու զարգացման հեռանկարների մշակումը կատարել եմ ըստ գործունեության ուղղությունների, որոնք կարևորել եմ դպրոցի

զարգացման համար: Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարել եմ առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտել եմ դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր եմ հանել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ եմ ունեցել դպրոցի մանկավարժական, աշակերտական և ծնողական խորհուրդների հետ որոնց դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները հնարավորինս արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

«ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի մշակման համար կատարվել են հետևյալ քայլերը՝

1. սահմանվել է դպրոցի առաքելությունը,
2. վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել է եղած հիմնախնդիրները,
3. սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,
4. սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները,
5. սահմանվել են հիմնական գերակայությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
6. սահմանվել է ֆինանսատնտեսական գործունեությունը,
7. կատարվել է ռիսկերի գնահատում և դրանց կանխարգելման քայլեր,
8. ենթադրվել են ծրագրից ակնկալվող արդյունքները:

## Ընդհանուր դրույթներ

«ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագիրը կազմվել է Հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության «Սահմանադրության», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով:

ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշչի» դրույթներով:

ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ.-ի հունվարի 15-ի N 16 Ն հրամանի պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով ու ձևաչափով:

ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից հաստատված «Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

Հաստատության աշակերտների համար ստեղծվելու են բոլոր հնարավորություններն իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38 հոդվածով երաշխավորված կրթության իրենց իրավունքը:

ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոցի զարգացման 2024-2029թթ. ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել նաև դպրոցի տնօրենի և մանկավարժների նախորդ ուսումնական տարիների հաշվետվությունները, հաստատության ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագրի մշակման համար կատարվել են հետևյալ քայլերը՝

1. սահմանվել է դպրոցի առաքելությունը,
2. վերլուծվել են առկա իրավիճակը, բացահայտել եղած հիմնախնդիրները,
3. սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից նխող խնդիրները,

4. սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համարանհրաժեշտ գործողությունները և միջոցառումները,
5. սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
6. սահմանվել է ֆինանսատնտեսական գործունեությունը,
7. կատարվել է ռիսկերի գնահատում և դրանց կանխարգելման քայլեր,
8. ենթադրվել են ծրագրից ակնկալվող արդյունքները:

## ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

*Մեր բարոյական պարտականությունն է յուրաքանչյուր երեխային հնարավոր լավագույն կրթություն ու տալը:*

***Դեսմոնդ Թութու***

- Յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը:
- Բարձրակարգ կրթություն ստանալու համար անհրաժեշտ կրթական միջա- վայրի ձևավորում:
- Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականաց- ման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայման- ների ձևավորում:
- Հետագա կյանքում սովորողների ինքնահաստատման համար անհրաժեշտ կոմպետենցիաների ձեռքբերման բարենպաստ կրթական միջավայրի ապահովում:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր: Մեր բարոյական պարտականությունն է, քաղաքացիական առողջ հասարակության համար ձևավորել առողջ սերունդ՝ զինված գիտելիքներով, զարգացած կարողունակություններով, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, սոցիումին ինտեգրված, նպատակասլաց ու հայրե- նասեր:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում եմ կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատ- վության», «ինտեգրման» անվանված 21-րդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ եմ ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

«Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է»:

Մեր օրերում, և'հարակական գիտակցության, և' պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակչությունը շարունակում է մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Ժամանակակից դպրոցում կրթության բնագավառի գերխնդիրներն են.

- Կրթության որոկի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը:
- Քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:
- Յուրաքանչյուր սովորողի ու աշխատողի ստեղծագործական կարողությունների, նախասիրությունների բացահայտում և խթանում:
- Սովորողների մոտ մեդիագրագիտության հմտությունների զարգավումը:
- Իր իրավունքներն ու պարտականությունն իմացող օրինապահ, ազնիվ, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող, հասարակական գործում դիրքորոշում ունեցող, կարողունակ քաղաքացիների ձևավորում:
- Դպրոցում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ներդրումը՝ մասնագիտական կողմնորոշման խմբակներ ստեղծման միջոցով:
- Համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծումը:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար բարենպաստ միջավայրի ստեղծման միջոցով անհատի ու հասարակության միջև կապի ամրացում:

Համոզված եմ, որ սույն զարգացման ծրագրի իրականացման ընթացքում Ամրակիցի միջնակարգ դպրոցը կդառնա յուրաքանչյուր սովորողի, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի և բոլոր մանկավարժների ստեղծագործական կարողությունները, նախասիրությունները բացահայտող և խթանող, որակյալ կրթություն ապահովող, անձի համակողմանի ձևավորմանը նպաստող, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան սովորողների մոտ անհրաժեշտ կարողունակությունների ձեռքբերմանը նպաստող, համայնքի հետ ակտիվ համագործակցող, սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող կրթական կենտրոն:

Վերոհիշյալ կետերի իրականացմանը կնպաստի հանրակրթական պետական նոր չափորոշչի ներդրումը, մասնագիտական կողմնորոշում իրականացնող մանկավարժների վերապատրաստումը, անհրաժեշտ բնագիտական և ՏՀՏ լաբարատորիաների ստեղծումը, սովորողների մոտ մեդիագրագիտության մակարդակի բարելավումը:

Այս ամենը իրատեսական կդառնա ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնմամբ՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական չափանիշների հետ:

# 1. ՀԱՄՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին՝**

**Դպրոցի հասցեն՝** ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Ամրակից, փ. 2, շ. 18

**Դպրոցի էլ. փոստ՝** amrakits@schools.am

**Վեբ կայք՝** http://schoolamrakits.am/

**Սոցիալական ցանց՝** https://www.facebook.com/

**Հեռ.՝** (0256) 2-44-68

**Կազմակերպա-իրավական տեսակը՝** ոչ առևտրային

**Իրավաբանական տեսակը՝** ՊՈԱԿ

«ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը Ամրակիցում (նախկինում Կիրովո) հիմնադրվել է 1939թ. տեղի ռուս ազգաբնակչության կողմից, որպես ռուսական տարրական դպրոց: 1946-1961թթ. գործել է իբրև յոթամյա, 1961-1991թթ.՝ ութամյա ռուսական, իսկ 1991թ. մինչ օրս՝ հայկական միջնակարգ դպրոց: Շենքը կառուցվել է 2000 թվականին, ընդհանուր 685,6 $մ^2$ մակերեսով:

Դպրոցի կանոնադրությունը գրանցվել է 22.01.2013թ.-ին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Ստեփանավանի տարածքային բաժնի կողմից, հաստատվել է 22.01.2013թ.-ին փոփոխման է ենթարկվել 20.03.2020թ.-ին, 10.11.2020թ-ին և 01.07.2022թ-ին.

Գրանցման N 92.210.00465 Վկայական N 03Ա 057008

ՀՀ կրթության գիտության նախարարի 2011թ.-ի հուլիսի 15-ի թիվ 814-Ա/ք հրամանով տրված լիցենզիաների https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=70014 համաձայն դպրոցն իրավունք ունի իրականացնելու ընդամենը 150 սովորողի համար հետևյալ հանրակրթական ծրագրերը.

- տարրական /ընդհանուր՝ 1-ին աստիճան/41 աշակերտի(լիցենզի ԱN0465)
- հիմնական /ընդհանուր՝ 2-րդ աստիճան/ 62 աշակերտի(լիցենզիա ԱN0455)
- միջնակարգ /ընդհանուր՝ 3-րդ աստիճան/ 47 աշակերտի(լիցենզիա ԱN0357)

Դպրոցը միահերթ է, տարածքը ցանկապատված, ունի երկհարկանի մեկ մասնաշենք՝ մուտքի մոտ առկա է թեքահարթակ, գազաֆիկացված է, ջեռուցումը՝ լոկալ: Ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դպրոցում այսօր առկա են՝

Գրադարան , որի բացումը եղել է 2018թ., միայն հովանավորների ներդրումներով











Ռազմագիտության կաբինետ՝ պահոց սենյակով, որը 2021թ. անվանակոչվել է «Արցախի հերոս» Շահեն Մեղրյանի անունով:







Սանհանգույց 2021թ.



Ճաշարան





Դպրոցում 2015 թվականին մեկնարկել է ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպված «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին և նախակրթարանի սաներին ապահովել առողջ, տաք սնունդով, հաղթահարել աղքատությունը, բարձրացնել դպրոցականների հաճախելիությունը: Իսկ 2023թ-ից սկսած անցել ենք պետական միջոցների հաշվին՝ «Դպրոցական սնունդ ազգային ծրագրին»:

Մրգատու այգի 2190 քմ









Մարզադաշտ   540 քմ , 2010թ.



## Մարդկային ռեսուրսներ

Դպրոցում աշխատում են

19 ուսուցիչ, որոնցից 16-ը կանայք են: Ուսուցիչներից հիմնական աշխատողներ են 14-ը, բարձրագուն կրթություն ունեն՝ 18-ը: Ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը 2.3 է: Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը մոտավորապես 18.6 ժամ է: 2023-2024 ուսումնական տարվա սկզբին դպրոցն ունի 49 աշակերտ:

| | | | |
|---|---|---|---|
| **1** | Ուսուցիչների ընդհանուր թիվը | 21 | կանայք 19 |
| **2** | Աշակերտների ընդհանուր թիվը | 49 | |
| **3** | Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ | 20 | կանայք 18 |
| **4** | Կամավոր ատեստավորված/ 70 -ից բարձր/ | 2 | կանայք 1 |
| **5** | Կամավոր ատեստավորված /90%-ից բարձր/ | 1 | կանայք 1 |
| **6** | Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 3 | կանայք 3 |
| **7** | Ուսուցիչ/սովորող հարաբերությունը | 49/21≈2.3 | |
| **8** | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | ≈18.6 | |
| **9** | Առարկայական մեթոդմիավորումները<br>➢ հումանիտար և հասարակագիտական առարկաներ<br>➢ բնագիտամաթեմատիկական<br>➢ տարրական կրթության | 3 | կանայք 2 |
| **10** | Ուսուցչի օգնական | 1 | կանայք 1 |
| **11** | Հոգեբան | 1 | կանայք 1 |
| **12** | Սպասարկող անձնակազմ | 6 | կանայք 3 |
| **13** | Սպասարկող անձնակազմ/աշակերտ հարաբերությունը | 49/6≈8.1 | |
| **14** | Օպերատոր | 1 | կանայք 1 |
| **15** | Հաշվապահ | 1 | կանայք 1 |
| **16** | Գործավար | 1 | կանայք 1 |

## Ընդհանուր ղեկավարման հաստիքներ

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքներրի թիվը |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 |
| 2 | Վարչատնտեսական համակարգող | 1 |

## Մանկավարժական համակազմը

| հ/հ | Հաստիքների անվանումը | Հաստիքների թիվը |
|---|---|---|
| 1 | Զինղեկ, քաղպաշտպանություն | 1.5 |
| 2 | Ուսուցիչներ | 16.6 |

## ՈՒսումնաօժանդակ անձնակազմ

| հ/հ | Հաստիքների անվանումը | Հաստիքների թիվը |
|---|---|---|
| **1** | Հաշվապահ | 1 |
| **2** | Օպերատոր | 0.5 |
| **3** | Գործավար | 0.5 |

## Սպասարկող անձնակազմ

| հ/հ | Հաստիքների անվանումը | Հաստիքների թիվը |
|---|---|---|
| **1** | Հավաքարար | 1 |
| **2** | Դռնապան | 0.75 |
| **3** | Պահակ | 2.25 |

## ՌԻսուցիչների տարիքային կազմը

| հ/հ | Ուսուցիչների տարիքային խումբը | Թիվ |
|---|---|---|
| **1** | Մինչև 30 տարեկան | 7 |
| **2** | 31-40 տարեկան | 5 |
| **3** | 41-50 տարեկան | 3 |
| **4** | 51-55 տարեկան | 1 |
| **5** | 56 և ավելի | 5 |

## Հաստատության առկա հիմնախնդիրները ըստ ոլորտների

| Ոլորտ | Հիմնախնդիր |
|---|---|
| ➢ Դպրոցի շենքային պայմանները | ➢ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում: |
| ➢ Նյութատեխնիկական բազան | ➢ Նյութատեխնիկական բազայի հարստացում նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով, լաբորատոր գույքով |
| ➢ Կառավարման և խորհրդակցական մարմիններ | ➢ Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում և համագործակցության ամրապնդում |

| | |
|---|---|
| ➢ Հաստատության համագործակցությունը համայքի, կրթության կառավարման մարմինների, ծնողական համայնքի և շահառու կազմակերպությունների հետ | ➢ Սովորողների սոցիալականացման ապահովում ( hասարակական կյանքին ինտեգրելու, hասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում ) |
| ➢ Աշակերտական համակազմ | ➢ Ուսման նկատմամբ սովորողների մոտ մոտիվացիայի խթանում<br>➢ Ուսումնառության որակի բարելավում<br>➢ Կարողունակ քաղաքացու ձևավորում<br>➢ Մասնագիտական կողմնորոշմանն ուղված շարունակական աշխատանքների իրականացում, համագործակցությունների շրջանակների ընդլայնում<br>➢ Աշակերտական ինքնավարության խթանում<br>➢ Արժեհամակարգի ձևավորում<br>➢ Կոմպենենտ ( կարողունակ) քաղաքացիների ձևավորում |
| ➢ Մանկավարժական համակազմ | ➢ Մանկավարժական համակազմի մասնագիտական և դասավանդման որակների շարունակական արդիականացում և բարելավում<br>➢ Կամավոր ատեստավորման |

| | |
|---|---|
| | մասնակցության և տարակարգի համար դիմողների ակտիվության խթանում |
| ➢ Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների նորարարությունները | ➢ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում դպրոցում և օգտագործում դասպրոցեսում, խմբակներում, նախագծային աշխատանքների և միջոցառումների ընթացքում<br>➢ Ժամանակակից լաբորատորիաների, էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերում՝ էլեկտրոնային, ինտերակտիվ դասերի վարում<br>➢ Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում<br>➢ Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում<br>➢ Հեռավար դասերի կազմակերպում՝ մենթոր դպրոցների հետ համագործակցելով |
| ➢ Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակ | ➢ Նոր չափորոշչին անցմամբ պայմանավորված որոշակի դժվարությունների հաղթահարում<br>➢ ՀՊՉ-ով սահմանված երեք |

| | |
|---|---|
| | կրթական աստիճանների շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջների՝ կարողունակությունների (կոմպետենցիաների ) և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ապահովում<br>➢ Մարզային, հանրապետական առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում<br>➢ ԿԱՊԿՈւ սովորողների կրթության համար անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում |
| ➢ Ուսումնական միջավայր | ➢ Սովորողների մոտիվացիան ապահովող,ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի ստեղծում |
| ➢ Ֆինանսատնտեսական գործունեությունը | ➢ Լրացուցիչ ֆինանսական միջոցների գոյացում<br>➢ Դրամաշնորհային ծրագրերի ներգրավում |

**01.09.2023թ. դրությամբ**

## 1.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն

| Շենքային պայմաններ | Քանակ | Մակերես (քմ) | Ներկա իրավիճակ |
|---|---|---|---|
| Երկհարկանի տիպային շենք | 1 | 685,6 | բավարար |
| Գրադարան/նիստերի դահլիճ | 1 | 62 | գերազանց |
| Դասարաններ | 10 | 31 | բավարար |
| Տնօրենի կաբինետ | 1 | 14,2 | բավարավ |
| Ռազմագիտության կաբինետ | 1 | 31 | բավարար |
| Ճաշարան | 1 | 22,5 | լավ |
| Սննդի պահեստ | 1 | 7 | լավ |
| Համակարգչային կաբինետ/Արմաթ լաբորատորիա | 1 | 31 | բավարար |
| Սանհանգույց | 2 | 7,5 | լավ |
| Մուտքի մոտ՝ թեքահարթակ | 1 | | բավարար |
| Ջեռուցման լոկալ համակարգ | | | լավ |

<table>
<tr><th colspan="2">Իրավիճակի վերլուծություն</th></tr>
<tr><th>ՈՒժեղ կողմ</th><th>Թույլ կողմ</th></tr>
<tr><td>

• Դպրոցի շենքը 2000 թվականին կառուցված ամուր քարե  կառույց է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989<br>
• Դպրոցը տեղակայված է անվտանգ վայրում:<br>
• Դպրոցի տարածքը ասֆալտապատված և ցանկապատված է,երեխաների տեղաշարժի համար անվտանգ:<br>
• Առկա են սպորտհրապարակ, խաղահրապարակ:<br>
• Առկա է պտղատու այգի 2,1 հա:<br>
• Ապահովված է մշտական տաք և սառը ջրով:<br>
• Գործում է լոկալ ջեռուցման համակարգ:<br>
• Լուսամուտներն ու դռները փոխված են (եվրոպատուհաններ եվրոդռներ):<br>
• 2 հարկում էլ առկա են դուրս բացվող պահուստային ելքեր:<br>
• Բոլոր դասասենյակներում և միջանցքներում առկա են սովորողների և անձնակազմի տարհանման պլաններ:<br>
• Տարրական դասարանների անվճար սննդի կազմակերպման համար ստեղծվել են բավարար պայմաններ (խոհանոց և ճաշարան):<br>
• Դպրոցի գրադարանը վերանորոգված ու կահավորված է :Ապապահովված է, դասագրքերով, գեղարվեստական  և ծրագրային  ժամանակակից գրականությամբ:<br>
• Աշակերտական սեղան աթոռները ամբողջովին նոր ու հարմարավետ է:<br>
• Դպրոցն ապահովված է կաբելային և WIFI ինտերնետային կապերով:

</td><td>

1. Դպրոցն ունի երկրորդ մասնաշենքի և մարզադահլիճի կառուցման կարիք, քանի որ.<br>
• Կա դասասենյակների պակաս:<br>
• Չկան առարկայական կաբինետներ և լաբորատորյաների համար սենյակներ:<br>
• Չկան համապատասխան պայմաններ ֆիզկուլտուրայի դասաժամերը կազմակերպելու համար:<br>
• Համատեղում են համակարգչային կաբինետն ու Արմաթ լաբորատորիան:<br>
• Երկրորդ հարկի պահուստային ելքի աստիճանները վերանորոգման կարիք ունեն<br>
• Չկան՝ հաշվապահի, օպերատորի, գործավարի աշխատանքային սենյակներ:<br>
• Չկա գիշերային պահակների հանգստի սենյակ:<br>
• Իր կառուցման օրից մինչ օրս չի վերանորոգվել:<br>
2. Դասասենյակներն ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք:<br>
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար չկան խելամիտ հարմարեցումներ, այդ թվում հարմարեցված սանհանգույց, երկրորդ հարկ տանող թեքահարթակ, ռեսուս-սենյակ և այլն:

</td></tr>
</table>

## 1.2. Նյութատեխնիկական բազայի վերլուծություն

| Գույք սարքավորումներ | Քանակ | Ներկա վիճակը |
|---|---|---|
| Դյուրակիր համակարգիչ | 1 | բավարար |
| Համակարգիչ | 10 | 4 լավ, 6 բավարար |
| Պլանշետ | 15 | լավ |
| Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք | 2 | լավ |
| Դաշնամուր | 1 | բավարար |
| Պրոեկտոր | 1 | լավ |
| Սառնարան | 1 | Լավ |
| Սալօջախ | 1 | լավ |
| Ջրատաքացուցիչ | 1 | լավ |
| Կենցաղային կշերք | 1 | գերազանց |
| Խոհանոցային լվացարան | 2 | լավ |
| Դարակաշար | 1 | լավ |
| Խոհանոցի աշխատանքային սեղան | 1 | լավ |
| Արմաթ լաբոլատորյայի գույք, սարքավորումներ | Կահավորված լաբորատորիա | լավ |
| Աշակերտական սեղան աթոռներ | 280 | գերազանց |
| Ուսուցչի սեղան | 16 | գերազանց |
| Ուսուցչի աթոռ | 40 | գերազանց |
| Գրապահարաններ/գրադարան/ | 10 | գերազանց |
| Պլաստմասե բազկաթոռներ/գրադարան/ | 45 | գերազանց |
| Աշխատանքային մեծ սեղան / գրադարան/ | 1 | գերազանց |
| Փայտյա ոտքերով պլաստմասե աթոռ /գրադարան/ | 12 | գերազանց |

| Իրավիճակի վերլուծություն | |
|---|---|
| ՈՒժեղ կողմ | Թույլ կողմ |
| 1.Ուսումնական պարապմունքներն անցկացնելու համար առկա են առարկայական պաստառներ, դիդակտիկ նյութեր, գործիքներ, պարզագույն փորձերի ժամանակ օգտագործելով լաբորատոր սարքավորումներ:<br>2.Դպրոցն ունի լավ կավորված «Արմաթ» լաբորատորիա, առկա է ՏՀՏ-ի անհրաժեշտ որոշակի քանակ (համակարգիչներ, պլանշետներ, բազմաֆունկցիոնալ պատճենման սարքեր, պրաեկտոր և այլն):<br>3.Ապահոված է գույքով, որոշակի լաբորատոր սարքավորումների առկայություն:<br>4.Գրադարանը վերանորոգված է, ունի գեղեցիկ կահավորված ընթերցասրահ, հանդիսանում է աշակերտների ամենասիրված դպրոցի անկյուններից մեկը, ապահոված է դասագիքերով, գեղարվեստական և ծրագրային գրականությամբ, ծառայում է նաև որպես նիստերի դահլիճ:<br>5.Առկա են շախմատ առարկայի դասավանդման բոլոր անհրաժեշտ պայմանները:<br>6.Աշակերտական սեղան աթոռները ամբողջությամբ նոր են: | 1.Քիչ են համակարգիչների թիվը:<br>2.Չկա առարկայական կաբինետներ և տարածք դրանք ստեղծելու համար:<br>3.Չկա ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորյաներ, նյութեր:<br>4.Առկա օժանդակ սենյակների մակերեսները(սանհանգույցների, զուգարանակոնք, հանդերձարան) քանակությունը չի համապատասխանում սանիտարական նորմերով սահմանված չափանիշներին:<br>5.ԿԱՊԿՈՒ երեխաների համար շենքի ներսում անհրաժեշտ հարմարեցումները բացակայում են: ԿԱՊԿՈՒ երեխաների համար առանձնացված սենյաներ չկան:<br>6.Համակարգիչների մեծ մասը ֆիզիկապես մաշված են:<br>7.Դպրոցի նյութատեխնիկական բազայի, գույք-սարքավորումների սակավություն:<br>8.Ոչ միշտ է հնարավոր լինում համալրել գրադարանը մասնագիտական գրականությամբ:<br>9.Լաբորատոր սարքավորումները հնացած են, շատ անհրաժեշտ նյութեր բացակայում են: |

## Նպատակ 1.1 1.2

Կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկը ուսումնական միջավայրն է, որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը, սովորողի առողջության պահպանմանը, ֆիզիկական զարգացմանը:

**Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող հասանելի և մատչելի ուսումնական միջավայրի (ֆիզիկական միջավայր + նյութատեխնիկական բազա) ապահովումը:**

**Խնդիր ներ**

Բարեկարգ ֆիզիկական միջավայրի ապահովում:

Ստեղծել բարենպաստ պայմաններ առողջության պահպանման և ֆիզիկական զարգացման համար:

Դպրոցի որակյալ կրթական պահանջներին համապատասխան ունենալ առարկայական կաբինետներ:

**Գործո ղություններ**

1. 2026թ.
Հետևողական լինել դպրոցը պետական ծրագրով վերանորոգվող դպրոցների շարքում ընդգրկելու գործով:
2. 2024-2025թթ.
Խնդիրը ներկայացնել լիազոր մարմին:
3. 2024թ.
Փնտրել հովանավորներ գործարարների մեջ, դպրոցի շրջանավարտների մեջ:
4. 2024-2025թթ.
Հնարավորության դեպքում առաջնահերթ բարեկարգել առավել անմխիթար տարածքները:
5. 2024-2029թթ. մշտապես
Հետևել լուսավորության ապահովմանը (էլէկտրոնային և բնական):
6. 2024-2029թթ. մշտապես
Ապահովել օդափոխությունը, մաքրությունը:
7. 2026թ.
Ստեղծել ԿԱՊԿՈՒ աշակերտների համար

1. 2026-2028թթ.
Դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքները կազմակերպելիս առաջնահերթությունը տալ մարզադահլիճի կառուցմանը և կահավորմանը:
2. 2.2025թ.
Ստեղծել կամավոր ներդրողների միություն (համայնքից, ծնողներից, շրջանավարտներից) դպրոցի մարզահրապարակը համալրելու թեթև ատլետիկայի և ռազմական խաղերի համար անհրաժեշտ պայմաններով:
3. 2024-2029թթ. մշտապես
Կազմակերպել սանիտարական օրեր, համագործակցել գյուղում սպասարկող բուժքրոջ հետ, առանձին թեմաների շուրջ կազմակերպել զրույցներ, սեմինար-պարապմունքներ:
4. 2024-2029թթ. մշտապես
Կազմակերպել դպրոցում աշակերտների սննդի հարցը:
5. 2027թ.
Ստեղծել բուժկետ իր բոլոր անհրաժեշտ պայմաններով առաջին բուժօգնություն

1. 2026-2028թթ.
Հիմնանորոգման ժամանակ ավելացնել դասասենյակների քանակը, հետևել կաբինետային սենյակների հարմարեցմանը դպրոցի կրթական պահանջներին:
2. 2026-2028թթ.
Համակարգչային սենյակը ընդարձակել, ավելացնել համակարգիչների թիվը:
Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակ,ժամանակակից այլ ՏՀՏ միջոցներ

Ստեղծել.
- Սմարթ լաբորիատորիա
- Քիմիայի լաբորատորիա
- Կենսաբանության լաբորատորիա
- Ֆիզիկայի լաբորատորիա

3. 2026-2027թթ.
Կառուցել մարզադահլիճ:
Ձեռք բերել մարզագույք:

4. 2024-2029թթ.

| | | |
|---|---|---|
| անհրաժեշտ պայմաններ՝ ռեսուս –սենյակի ստեղծման և կահավորման անհրաժեշտություն<br>8. 2024-2025թթ.<br>Դպրոցի սովորողների և ծնողների աջակցությամբ երիտասարդացնել դպրոցի այգին և ապահովել խնամքը:<br>9. 2025թ.<br>Դպրոցի բակում աղբի տեսակավորման համար աղբամանների տեղադրում | ցուցաբերելու համար: | Գրադարանը պարբերաբար համալրել անհրաժեշտ գրականությամբ:<br>5.2026-2029թթ<br>Ձեռք բերել էլեկտրոնային գրքեր: |

## Ռիսկերը

- Դրամաշնորհային ծրագրերի բացակայություն, ֆինանսական միջոցների անբավարարություն
- Անհաղթահարելի ուժի առաջացում(ֆորս մաժորային իրավիճակներ)
- Աշակերտների թվի նվազում
- ՀՀ կրթության որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում դպրոցի ներառված լինելը

## Ռիսկերի ազդեցությոնը մեղմող գործողություններ

- Տանել հետևողական աշխատանք դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվելու համար
- Դպրոցի ձեռքբերումների և առօրյայի, աշակերտների նվաճումների, հանգստի ու ժամանցի հետ կապված դպրոցի գործունեության շարունակական լուսաբանում:

## Ակնկալվող արդյունքները

- Բարելավված, հրապուրիչ, հարմարավետ, սովորողների մոտիվացիան ապահոող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական հագեցվածությամբ՝ նոր չափորոշչային կրթական պահանջներին բավարարող ուսումնական ( ֆիզիկական) միջավայր:
- Աշակերտների առողջության պահպանմամ նպատակով առաջ քաշված խնդիրները նպատակ ունեն.
    - Դպրոցում ապահովել սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմաններ (անվտանգ սննդի,լուսային,ջերմային )

- Ունենալ մաքուր բակ, պլաստիկ շշերի հանձնումից ստանալ շահույթ և օգտագործել ի նպաստ դպրոցի
- Սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ
- Պայքարել սովորողների մոտ վտանգավոր սովորույթների դեմ ( ծխելու, դպրոցական բռնության, թմրամոլության , և այլն)

- Հարստացված, արդիական նյութատեխնիկական բազա՝ համալրված նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով, էլեկտրոնային գրատախտակով,լաբորատորիաներով, մասնագիտական կողմնորոշման կենտրոններով:
- ԿԱՊԿՈՒ աշակերտների ինտեգրում և նրանց համար որակյալ կրթության ապահովում, ռեսուրս սենյակի ստեղծում:

## Վերահսկողություն

- Նախահաշվի կազմում, ֆինանսական միջոցներին համապատասխան՝ նյութատեխնիկական բազայի համալրում, հարմարավետ ուսումնական միջավայրի ստեղծում:
- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում:
- Պարբերաբար կատարած աշխատանքների և գործողությունների ընթացքի վերահսկում, վերլուծություն՝ համապատասխանությունը գործողությունների արդյունքների և վերհանված կարիքների:
- Համապատասխան արձանագրությունների,հաշվետվությունների կազմում և իրազեկում շահառուներին:

## 1.1 1.2 Գնահատման չափանիշները

| Արդյունքների գնահատման չափանիշներ | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| | ա.գործողությու-ները իրականաց-վել են ամբողջու-թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | ա.գործողությունները իրականացվել են ամբողջությամբ<br>բ.մասամբ ապահովել են ակնկալվող արդյունքները | պլանավորած գործողություն-ները իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ | պլանավորած գործողությու-ները չեն իրականացվել |
| Բարեկարգ ֆիզիկա-կան միջավայրի ապահովում | | | | |
| Ստեղծել բարենպաստ պայմաններ առողջու-թյան պահպանման և ֆիզիկական զարգաց-ման համար | | | | |
| Դպրոցի որակյալ կրթական պահանջ-ներին համապատաս-խան ունենալ առար-կայական կաբինետներ | | | | |
| Ունենալ ԿԱՊԿՈւ սովորողների ինտեգ-րում և ապահովել որա-կյալ կրթություն | | | | |

## 1.3.Հաստատության կառավարման մարմնի  և տնօրենի համագործակցության վերլուծություն

*Աշխարհում կա երկու դժվար բան՝*
*կրթել և կառավարել:*

***Իմանուել Կանտ***

Դպրոցի զարգացման նպատակներից է կառավարման որակի բարձրացումը, որը կիրականացվի բոլոր շահառու մարմինների համագործակցության արդյունքում: Այդ համագործակցությունը դպրոցի կառավարումը կդարձնի առավել մասնակցային, թափանցիկ և արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է ակտիվացնել նրանց գործու-նեությունը և բարձրացնել նրանց դերն ու հեղինակությունը դպրոցում: Ակնհայտ է, որ դպրոցի ղեկավարը իր գործունեությունը ծրագրելիս ընդգծի այն սկզբունքներն ու գերակայությունները, որոնք նա պլանավորում է սահմանել և գործածել կառավարման մարմինների, ղեկավարների, խորհրդակցական մարմինների և աշխատակիցների հետ փոխհարաբերություններում:Նման սկզբունքների սահմանումը նրան թույլ կտա լինել հասկանալի և թափանցիկ բոլոր մարմինների հետ հարաբերություններում:

Համապատասխանաբար սույն ծրագրում արտացոլված բոլոր միջոցառումներն իրա-կանացնելիս  դպրոցի աշխատակիցների, գործընկերների, աշակերտների, ծնողների, խորհրդակցական մարմինների, դպրոցի կառավարման խորհրդի, կրթության կառավարման լիազորված մարմնի և այլ պետական մարմինների հետ հարաբերություններում անվերապահորեն կդրսևորվեն  հետևյալ հիմնական հատկանիշները և  սկզբունքները՝

- ✓ ազնվություն և արդարամտություն
- ✓ պարտաճանաչություն
- ✓ հարգալից և բարեհամբույր վերաբերմունք
- ✓ պատասխանատվության բարձր զգացում և հետևողականություն
- ✓ փոխադարձ վստահության և փոխադարձ համագործակցության պատրաստակամություն

- ✓ աշխատանքի կազմակերպման հրապարակային սկզբունքներ և թափանցիկու-թյուն, թիմային աշխատանք
- ✓ անձնակազմի յուրաքանչյուր անդամի կարևորության ընդգծում
- ✓ իրավիճակային գործունեության ճկունություն
- ✓ ՀՀ կրթության բարեփոխմանն ուղված բավարար ակտիվության դրսևորում և համապատասխան աջակցություն
- ✓ մասնակցային կառավարում:

<table>
<tr><th colspan="2">Իրավիճակի վերլուծություն</th></tr>
<tr><th>ՈՒժեղ կողմ</th><th>Թույլ կողմ</th></tr>
<tr><td>• Հաստատության կառավարումն իրակա-նացվում՝ համաձայն կանոնադրության:<br>• Դպրոցում ապահովված է ժողովրդա-վարական կառավարման սկզբունքները:<br><br>• Դպրոցի կառավարման մարմիններն են.<br>• «Հայաստանի հանրապետության պետա-կան հանրակրթական ուսումնական հաս-տատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադ-րության 29-րդ կետի համաձայն՝ հաստա-տության կառավարումն իրացնում է հիմ-նադիրը՝ ի դեմս ՀՀ կառավարության<br>➢ Սահմանում է դպրոցի գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները<br>• ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը<br>• Դպրոցի տարածքային կառավարման մարմինը Լոռու մարզպետարանն է, որն իրականացնում է ընդհանուր կառավարումը, վերահսկողությունը և ապահովում բնականոն գործունեությունը<br>➢ ՀՀ կառավարության սահմանված կարգով նշանակում է իր լիազորության տակ գտնվող հաստատության տնօրենին և համակարգողին և նրանց հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով</td><td></td></tr>
</table>

| | |
|---|---|
| ➢ Հաստատում է դպրոցի կանոնադրությունը և դրանում կատարված փոփոխությունները<br>➢ Համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար<br>➢ Վերահսկողություն է իրականացնում դպրոցին ամրացված՝ պետական սեփա-կանության օգտագործման և պահպանության նկատմամբ<br>➢ Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնա-րարականների կատարումը<br>• Դպրոցում գործում է միացյալ կառավարման խորհուրդը՝ (Ամրակիցի միջնակարգ դպրոց, Գարգառի միջնակարգ դպրոց և Պուշկինոյի հիմնական դպրոց) բաղկացած 19 անդամից:<br>➢ Կառավարման խորհուրդը պատշաճ իրա-կանացնում է դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված բոլոր գործառույթները:<br>➢ Հաստատել է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրել խորհրդի նախագահ և քարտուղար<br>➢ Կառավարման խորհրդի նիստերը հրա-վիրվում են սահմանված ժամկետում և օրակարգով, հրավիրվում են նաև արտահերթ նիստեր՝ ելնելով անհրաժեշտությունից առկա և հեռավար ձևաչափով<br>➢ Դպրոցի հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի վերաբերյալ քննարկումներ անցկացնելը և հավանություն տալը<br>➢ Քննարկում և հաստատում է տարեկան եռամսյակային ծախսերի նախահաշվային նախագծերը հաշվի առնելով ծախսային նախագծերի վերաբերյալ բոլոր կարծիքներն ու առաջարկությունները<br>➢ Տարեկան առնվազն երկու անգամ՝ կիսա-մյակների ավարտին, լսում, քննարկում և հավանության է արժանացնում տնօրենի զեկույցները՝ կատարած ուսումնադաս-տիարակչական աշխատանքների մասին<br>➢ Քննարկում և հաստատում է ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը<br>➢ Հաստատում է դպրոցի ներքին կարգա-պահական կանոնները<br>➢ Աջակցում է տնօրենին զարգացման ծրագրի կատան գործընթացում, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությոիննների | ➢ Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը վկայում է, որ այն հիմնականում կրում է ձևական բնույթ սահմանափակվելով կառավարման խորհրդի ՀՀ գործող իրավական ակտերով ու դպրոցի կանոնադրությամբ ամրագրված հիմնական լիազորությունների կատարմամբ<br>➢ Վերջին շրջանում կառա-վարման խորհրդի պասիվություն, նախաձեռնության պակաս,ձեռնպահ վերաբերմունք:<br>➢ Խորհրդի անդամները հաճախակի չեն այցելում դպրոց:<br>➢ Կառավարման խորհրդի անդամներից ոչ բոլորը ունեն բարձրագույն կրթություն<br>➢ Խորհրդի անդամները չեն մասնակցել ԿԶՆԱԿ-ի կամ այլ կազմակերպության կազմակերպած մասնա-գիտական զարգացման վերապատրաստումների |

իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն

- Տնօրենը խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը
- Քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները
- Քննարկում է մանկավարժահոգեբանական աջակցությունների կարիքի գնահատման արդյունքների հաշվետվությունները
- Լիազորված մարմնին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան
- Աջակցում է դպրոցին.
  - ✓ Նյութատեխնիկական բազայի հարստացման
  - ✓ Հովանավորներ փնտրելու
  - ✓ Համայնքի հետ արդյունավետ համագործակցելու
  - ✓ Լավ աշխատողներին խրախուսելու, կամ աշխատանքում թերացողներին նկատողություն տալու
  - ✓ Տնօրենի և խորհրդակցական մարմինների հաշվետվությունները լսելու,քննարկելու,
  - ✓ Ակտիվ վերահսկողություն է իրականացնում տնօրենի և վարչատնտեսական համակարգողի գործունեության նկատմամբ
- Կառավարման մարմնի և տնօրենի արդյունավետ համագործակցությունը՝ ի շահ դպրոցի, թույլ է տալիս ռազմավարական որոշումներ կայացնել, որոնք համահունչ են դպրոցի տեսլականին, առաքելությանը և կրթական նպատակ-ներին
- Միասին աշխատելով՝ ղեկավար մարմինը և տնօրենը որոշումներ են կայացնում ռեսուրսների բաշխման վերաբերյալ, ապահովելով միջոցների օպտիմալ օգտագործում և աջակցություն կրթական ծրագրերին
- Խթանվում է համատեղ որոշումների կայացման գործընթացը,որը նպաստում է երկխոսության և փոխհամաձայնության մթնոլորտի ձևավորմանը
- Կառավարման խորհրդի անդամների և տնօրենների միջև ստեղծված է մասնակ-ցային,

| | |
|---|---|
| հարգալից աշխատանքային միջավայր<br>• Գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչա-տնտեսական համակարգողը ընթացիկ կառավրումն իրականացնում են պլանա-վորած ծրագրերին համապատասխան՝ կանոնադրության և այլ իրավական ակտերին համաձայն<br>• Դպրոցում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվել են հետևյալ խորհրդակցական մարմինները՝<br>• Մանկավարժական խորհուրդ՝ մանկավարժների թիվը 19 է, որոնք հանդիսանում են մանկավարժական խորհրդի անդամ: Մանկխորհրդի նիստերը բաց են, դրանք գումարվում են հաստատության կանոնադրության պահանջների համապատասխան (նախապես խորհրդի բոլոր անդամներին ծանուցելով նիստի անցկացման ժամանակի, վայրի և օրակարգի վերաբերյալ):<br>➢ Մանկավարժական խորհուրդը քննարկում է օրենքով, դպրոցի կանոնադրությամբ, հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան, հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործմանը վերաբերվեղ, կրթության որակի ապահովման հետ կապված հարցեր՝ սովորողների նախա-սիրությունների և ունակությունների համապատասխան<br>➢ Մանկավարժական խորհուրդը քննարկում և վեր է հանում առկա խնդիրները, առաջարկում դրանց լուծման ուղիները<br>➢ Մանկավարժական խորհուրդը մշտապես ուշադրության կենտրոնում պահելով ԿԱՊԿՈւ սովորողների հետ տարվող աշխատանքները, ըստ անհրաժեշտության առաջարկում է վերանայել տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության տեսակները<br>➢ Մանկավարժական խորհուրդը աշխատում է նվիրված և հանուն սովորողների որակյալ կրթության<br>➢ Առկա են նիստերի արձանագրությունները<br>• Ծնողական խորհուրդ՝ բաղկացած 12 անդամից<br>➢ Ծնողական խորհրդի նախագահը խորհր-դակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին | ➢ Դպրոցի կառավարման գործերում ծնողների ներգրավվածության ցածր մակարդակ:<br>➢ Ոչ բոլոր ծնողներն են լավ |

| | |
|---|---|
| ➢ Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում<br>• Աշակերտական խորհուրդ բաղկացած է 6 անդամից<br>➢ Աշակերտական խորհուրդը հիմնականում իրականացնում է իր գործառույթ-ները<br>➢ Աշակերտական խորհուրդը գիտակցում և կարևորում է ինքնակառավարման կարևորությունը<br>➢ Աշակերտական խորհրդի հանձնախմբերը ձևավորվում են տարիքային առանձնահատկություններին և կարողություններին համապատասխան<br>➢ Աշակերտական խորհրդի և տնօրենի միջև ստեղծված է մասնակցային մշակույթ, որը ապահովում է աշակերտական խորհրդի կողմից իրենց անմիջականորեն վերաբերող հարցերի շուրջ բաց և համագործակցային քննարկումները<br>➢ Դպրոցի տնօրենի աջակցությամբ իրականացվում է սովորողների նախաձեռնությունները<br>• Հաստատությունում գործող ծնողական և աշակերտական խորհուրդները ընտրվում են մեկ ուսումնական տարի ժամկետով և գործում են հաստատության կանոնադրության հիման վրա:<br>• Ծնողական և աշակերտական խորհուրդների նիստերը կազմակերպում են ճիշտ ժամանակին և մասնակցային սկզբունքով:<br>• Ծնողական խորհուրդը աջակցում է սոցիալապես անապահով աշակերտների ընտանիքներին, ընդհանուր կարիքի օգնություն ցուցաբերելու, սովորողների հանգստի կազմակերպման հարցերում, աջակցում է միջոցառումների կազմա-կերպմանը:<br>➢ Ծնողական խորհուրդը ծնողական համայնքի հետ մշտապես աջակցում է դպրոցում առկա խնդիրների լուծման նպատակով տարբեր նախաձեռնու-թյուններին<br>• Խորհուրդները սրտացավ են դպրոցի խնդիրներին, պատրաստակամ են աջակցել դպրոցին<br>• Առարկայական 3 մեթոդմիավորումներ<br>➢ Բնագիտամաթեմատիկական<br>➢ Հումանիտար և հասարակագիտական<br>➢ Տարրական կրթության | կատարում իրենց պարտականությունները:<br>➢ Ծնողական ժողովներին մասնակցում են միայն մայրերը<br>➢ Թերի է ծնողների գործուն մասնակցությունը մասնա-գիտական կողմնորոշման աշխատանքներին, ներհամայնքային միջոցառումներին<br>➢ Ծնողների մեջ տարածված թույր կարծիքն այն մասին, որ մասնակցել նշանակում է՝ պահանջել:<br>➢ Դպրոցի աշակերտական խորհրդի նախաձեռնությունների ինքնուրույան պակաս<br>➢ Աշակերտական խորհուրդը կարող է լինել առավել նախաձեռնող, ստեղծագործ և ակտիվ ներգրավվել նաև ներհամայնքային կյանքին<br>➢ Աշակերտների ներգրավվության պակաս դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակման<br><br>➢ Այլ դպրոցների մեթոդմիավորումների հետ դպրոցի մեթոդմիավորումների համագործակցությունննեի ցածր մակարդակ: Խորհրդի կազմը ձևավորելիս ծնողական խորհուրդը հաշվի չի առնում իր կողմից առաջադրված անդամի կրթական ցենզը, հանրակրթական բնագավառի օրենսդրու- |

| | |
|---|---|
| ✓ Մասնախմբերն ամիսը մեկ անգամ գումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում ուսումնադաստիարակ-չական աշխատանքները:<br>• Խորհուրդները սրտացավ են դպրոցի խնդիրներին, պատրաստակամ են աջակ-ցել դպրոցին:<br>• Վերոհիշյալ խորհուրդներն ու մեթոդ-միավորումները գործում են համաձայն դպրոցի կանոնադրության:<br>• Ձևավորված բոլոր խորհուրդները ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմվել է դպրոցը՝ հիմք ընդունելով համապատասխան օրինակելի կանոնադ-րությունները<br>• Խորհուրդները գործում են անկախ, կանոն-նավոր գումարում են իրենց նիստերը՝ նպաստելով դպրոցի ուսումնադաս-տիարակչական և կառավարման գործընթացին, անդրադառնում են ընթացիկ հարցերի և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար<br>• Կարևորված են բոլոր խորհուրդմերի ինքնավարությունը, իրենց գործողու-թյուններում ազատ լինելու հնարա-վորությունը, բացառելով դրանց ձևակա-նությունը, քանզի խորհրդակցական մար-մինների աշխատանքի արդյունավետությունից է կախված դպրոցի վարկանիշը<br>• Դպրոցում գործող խորհրդակցական մարմինները ներգրավված են կառավա-րման գործընթացում: | թյան իմացությունը:<br>➢ Խորհուրդների համագոր-ծակցությունը պասիվ է:<br><br>➢ Իրավական ակտերի փոփոխություններին, իրենց լիազորություններին, իրավունքներին ու պարտականությունների ն ոչ լիարժեքտիրապետելը<br>➢ Տեղեկատվական հար-թակների բազմազանության մեջ ոչ ճիշտ կողմնորոշվելը<br>➢ Հոգաբարձուների խորհրդի բացակայություն |

## Նպատակ 1.3

**Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում**

**Խնդիրներ**

- Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցությա ն
- Ծնողխորհրդի հետ համագործակցութ յան բարելավում:
- Աշ. խորհրդի գործունեությ ան ակտիվացում:
- Ծրջանավարտ ների և հոգաբարձուն երի խորհուրդների ձևավորում:
- Մանխորհրդի լիազորություն ների գործնական կիրառում:

**Գործողություններ**

2024-2029թթ.
Մշրապես համագործակցել
- ԿԳՄՍՆ-ի հետ
- Լոռու մարզպետարանի հետ
- կառավարման խորհրդի հետ
- Հաստատության հաշվետվությունները հասանելի դարձնել հաստատության շահառուներին՝ պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ սովորողներ, համայնք
- Ընդլայնել դպրոցի

2024-2029թթ.
Մշտապես համագործակցել ծնողական խորհրդի հետ:
Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում.
1. 2024-2029թթ.
- Տարեկան առնվազն չորս անգամ հրավիրել ծնողական ժողովներ
- Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում:

2. 2024-2029թթ.
Ծնողների ներգրավվածությունը իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին:

2024-2029թթ.
Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը.
1. 2024-2029թթ.
Աջակցել աշակերտական խորհրդին բարձրացնելու դպրոցի և իր կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ակտիվ գործունեության վերածելու համար
2. 2024-2029թթ.
Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ աշակերտի ինքնավարության միջոցով:
3. 2025-2029թթ.
Աշակերտական խորհրդի գործունեության

2025-2029թթ.
Դպրոցում կրթության գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունի շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդը:
1.2024-2025թթ.
Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ:
2.2025-2026թթ.

2024-2029թթ.
1.2024-2029թթ. մշտապես
Շարունակել մանկավարժական խորհրդի աշխատանքներում կիրառել մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքները:
2.2024-2029թթ. մշտապես
Ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական խորհրդի ընդունած որոշումների ճիշտ ժամանակին կատարումը:
3. 2025թ.
Ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրա-

| | | | | |
|---|---|---|---|---|
| խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով.<br>1. 2024թ.-ից Խորհրդի անդամներ մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, մրցույթներին, ներքին գնահատման արդյունքներին:<br>2. 2023-2024թթ. Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում:<br>3. 2024թ. ԿԳՄՍՆ-ին, լիազորված մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման:<br>4. 2024թ. Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմնին առաջարկությունների ներկայացում:<br>5. 2024-2029թթ. Բյուջեի ճիշտ պլանավորում, որը կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործումը:<br>6. 2024-2029թթ. Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց | 3. 2024-2029թթ. Ծնողների մասնակցությունը սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավվելով հովանավորների:<br>4. 2024-2029թթ. Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ:<br>5. 2024-2029թթ. Կազմակերպել համատեղ (ծնող, աշակերտ, ուսուցչական կոլեկտիվ) միջոցառումներ:<br>6. 2024-2029թթ. Ծնողխորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացմանը:<br>7. 2024-2028թթ. Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացին հրապարակել կայքում, մամուլում:<br>8. 2024-2029թթ. Ծնողխորհրդի կապի ամրապնդում, դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը:<br>9. 2024-2029թթ. Աջակցությունը ծնողական խորհուրդների | հիմքում կարևորելով սովորողների պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորման, շարունակել ակտիվ հասարակական անհատի կրթման, սեփական կարծիքների ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները:<br>4. 2024-2029թթ. Շարունակել ամենօրյա աշխատանքները կազմակերպվող միջոցառումները, հանդիպումները բանավեճերը, կլոր սեղաններն ու մրցույթները նպատակաուղղել աշակերտի ազատ մտածողության դաստիարակման, ուսման նկատմամբ անձնական պատասխանատվության ձևավորման գործին:<br>5. 2024-2026թթ. Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները: | Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների:<br>3.2025-2026թթ. Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը:<br>4.2025-2028թթ. Շրջանավարտների խորհուրդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություն կկատարեն:<br>5.2024-2028թթ. Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, դպրոցի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար: | խուսման նոր գործիքների կիրառում:<br>4. 2025-2029թթ. մշտապես Առաջավոր փորձի հիման վրա դպրոցի աշխատանքների ակտիվացում:<br>5.2025-2028թթ. Ուսումնական պլանների, ծրագրերի և դասագրքերի համալիր ստեղծման գործընթացին ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովում:<br>6.2024-2028թթ. Սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգի մշակման և կիրառման ներդրում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| արդյունավետ օգ-տագործման համար: 7. 2024-2029թթ. Ապահովել մյուս խորհուրդների հետ սերտ համագործակ-ցությունը: | աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում: 10.2024-2028թթ. Անհրաժեշտ է խթանել նաև ծնողների նախաձեռնողականու-թյունը | | | |

## Ռիսկեր

- Շահագրգիռ կողմերի զբաղվածությամբ պայմանավորված ոչ հաճախակի հանդիպումներ
- Շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակասը

## Ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

- Հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում
- Հանդիպումների հեռավար կազմակերպում

## Ակնկալվող արդյունքները

- Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցային կառուցողական հարաբերությունների ձևավորում և  ամրապնդում:
- Դպրոց-համայնք կապի խթանում
- Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդների ստեղծում:

## Վերահսկողություն

- Սահմանված կարգով կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների լիազորությունների պարտաճանաչ իրականացման շարունակականության ապահովում:
- Պարբերաբար հաշվետվությունների ներկայացում, հետադարձ կապ, իրազեկումներ:

- Իրականացվող աշխատանքների ընթացիկ վերահսկողություն և վերլուծություն:

## 1.3 Գնահատման չափանիշները

| Արդյունքների գնահատման չափանիշները | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| | ա.գործողությու-ները իրականաց- վել են ամբողջու-թյամբ բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | ա.գործողությու-ները իրականաց- վել են ամբողջու-թյամբ բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | պլանավորած գործողություն-ները իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ | պլանավորած գործողությու-ները չեն իրականացվել |
| Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում | | | | |
| Ծնողխորհրդի հետ համագործակցության բարելավում | | | | |
| Աշակերտական խորհրդի գործունեության ակտիվացում | | | | |
| Շրջանավարտների և հոգաբարձուների խորհրդի ձևավորում | | | | |
| Մանխորհրդի լիազորությունների գործնական կիրառում | | | | |
| Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է կայուն ու արդյունավետ համագործակցություն | | | | |

## 1.4.Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի,կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների հետ

Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացումը դաստիարակչության գործընթացի բաղկացուցիչ մաս է կազմում. Քանզի մեր երկրին անհրաժեշտ են զարգացած ժողովրդավար, ազատ մտածողություն դրսևորող քաղաքացիներ:

| Իրավիճակի վերլուծություն | |
|---|---|
| **ՈՒժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
| • Դպրոցը ապահովում է լիազորված մարմնի՝ՀՀ օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարմանը, մասնակցում քննարկումներին:<br>• Կրթության տեսչական մարմնի ստուգումների արդյունքների ուսումնասիրությունները նպաստում են դպրոցում առկա խնդիրների վերհանմանը, թերությունների շտկմանը<br>• Դպրոցը ակտիվ մասնակցություն է ունենում համայնքի միջոցառումներին (շաբաթօրյակներ,տոնական միջոցառումներ, հիշատակի օրեր և այլն), համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության:<br>• ՏԻՄ ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցների միջոցառումներին՝ «Գիտելիքի օր», «Վերջին զանգ», «Ազգային տոներ», «Հիշատակի օրեր» և այլն:<br>• Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի հետազոտմանը, իրականացրեցին համայնքում ավտոբուսի կանգառի ստեղծման ու կահավորման աշխատանքները:<br>• Համայնքապետարանը ևս մասնակցում է դպրոցական կյանքին, ընթացք տալիս իր լիազորությունների շրջանակում գտնվող հարցերին:<br>• Դպրոցը հաջողությամբ համագործակցում է ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների, բուժհիմնարկների, մշակութային օջախների, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:<br>➢ ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացվող վերապատրաստումներին դպրոցի ուսուցիչներն ներառված են և՛ վերապատրաստողների, և՛վերապատրաստվողների կազմում:Շարունակվում է ուսուցիչների մասնակցությունը նոր չափորոշչային պահանջների ներդրման վերաբերյալ վերապատրաստումներին:<br>➢ ԳԹԿ-ի կողմից իրականացվում է արտաքին գնահատում, | • Համայքի հետ համագործակցությունը բավարար չէ:<br>• Դպրոցը քիչ է համագործակցում մշակութային կենտրոնների հետ:<br>• Պասիվություն է ցուցաբերում սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու հարցում:<br>• Ծնողական համայնքի ներգրավվածությունը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին ակտիվ չէ |

| | |
|---|---|
| կազմակերպվում է՝ ավարտական, պետական ավարտական և միասնական քննություններ:<br>➢ ԿՏԱԿ-ի կողմից իրականացվող հեռավար ուսուցման կազմակերպման հմտություններ, emis.am-ի իրականացում:<br>➢ Համագործակցում ենք «Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամի, «Մասնակցային դպրոց» հիմնադրամի, «Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետ ուսուցիչների հերթական ատեստավորման վերապատրաստումներն իրականացնելու նպատակով:<br>Հաջողությամբ համագործակցում ենք «Դասավանդիր Հայաստան» կազմակերպության հետ՝<br>✓ Ժամանակակից գրադարանի ստեղծում և համայնքի կարիքների համար օգտագործում<br>✓ Դպրոցի սպորտհրապարակի կահավորում և համայնքի կարիքների համար օգտագործում<br>✓ Համայնքի հասարակական տրանսպորտի կանգառի կահավորում<br><br>➢ Համագործակցում ենք ոստիկանության Ստեփանավանի բաժնի հետ:<br>➢ Դպրոցը հաջողությամբ համագործակցում է Ստեփանավանի մշակույթի ժամանցի ու կենտրոնի կազմակերպած մշակութային միջոցառումներին, նախագծերին (վերջերս հաջողությամբ իրականացվեց «Քո արվեստը դպրոցում» նախագիծը):<br>➢ Դպրոցը մասնակցում է համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության:<br>➢ Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներմիտված համայնքի կարիքների հետազոտմանը:<br>➢ Դպրոցը համագործակցում է Ստեփանավանի զորամասի հետ: | |

## Նպատակ 1.4

### Սովորողների սոցիալականացման ապահովում

**Խնդիր ներ**

- Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ:
- Համագործակցել կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների հետ:
- Ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի:

**Գործո ղություններ**

1.2024-2029թթ. մշտապես
Դպրոցի միջոցառումներին հրավիրել մարզային իշխանության անդամներին, այդ թվում հասարակական կազմակերպությունների ղեկավարներին:
2.2024-2029թթ. մշտապես
Փոխադարձաբար ակտիվ մասնակցություն ունենալ մարզային և հասարակական կազմակերպությունների միջոցառումներին:
3.2024-2029թթ. պարբերաբար
Կազմակերպել և անց կացնել ցերեկույթներին մարզի, համայնքի, նշանավոր մարդկանց՝ արվեստագետների, արհեստագործ վարպետների, մշակութային գործիչների, գործարարների հետ:
4.2024-2029թթ. պարբերաբար
Կազմակերպել այցելություններ

1.2024-2028թթ.
Ծանոթանալ մարզում առանձին դպրոցների արտադասարանական գործունեությանը, կազմակերպել համագործակցություն առավել ակտիվ դպրոցների հետ:
1.1 2024-2025թթ.
Աշխատանքային դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման նպատակով համագործակցել ավագ դպրոցների, միջին մասնագիտական հաստատությունների հետ:
1.2 2024-2029թթ.
Ռազմահայրենասիրության դաստիարակության և նորագույն տեխնիկայի հետ ծանոթանալու նպատակով համագործակցել զինվորական զորամասի հետ:
2.2024-2029թթ.
Ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակով.
2.1 2024-2029թթ. մշտապես
Համագործակցել մարզում,

1.2024-2029թթ. մշտապես

Դաստիարակել քաղաքացիական հասարակության արժեքները կրող քաղաքացի, ով օժտված կլինի.
- ժողովրդավարությա
- քաղաքացիական
- ինքնաճանաչողական
- սոցիալական
- կամավորության,
- առաջնորդության,
- մասնակցայնության

կարողություններով
- ընդհանուր բարօրության գիտակցությամբ:
- Մշտապես համագործակցություն անչափահասների տեսչության հետ (սեմինարների անց-կացում՝ թրաֆիքինգը, թմրամիջոցները և այլ վնասակար սովորույթ-ները բացառելու նպա-տակով)

| | | |
|---|---|---|
| արվեստագետների արհեստանոցներ, ցուցահանդեսներ:<br>5.2024-2029թթ. պարբերաբար<br>Կազմակերպել այցելություններ մշակութային կենտրոններ:<br>6.2024-2029թթ.<br>Մշտապես հետևել մարզի նորություններին: | համայնքում գործող հանրակրթական դպրոցների, արվեստի դպրոցների, գրադարանների հետ:<br>2.2 2024-2029թթ. պարբերաբար<br>Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ, թատրոններ: | |

## Ռիսկեր

- Անհրաժեշտ պարագաների ձեռք բերման հնարավորությունների պակաս
- Շահառու կողմերի պասիվություն

## Ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

- Ցուցահանդես-վաճառքից ստացված հասույթի ճիշտ տնօրինում
- Նպաստել շահառու կողմերի ակտիվ ներգրավմանը, կարևորել համայնք-դպրոց կապը:

## Ակնկալվող արդյունքները

- Կոմպետենտ ( կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացու ձևավորում
  - ➢ Համագործակցության շրջանակի ընդլայնում
  - ➢ Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում
  - ➢ Սոցիալ- մշակութային դպրոցի ստեղծում

## Վերահսկողություն

1. Հաշվետվությունների ներկայացում յուրաքանչյուր ծրագրի, միջոցառման մասնակցությունից հետո:
2. Հետևել որպեսզի համագործակցությունները լինեն արդյունավետ և նպատակային կրթական ծրագրերին համապատասխան, վերահսկելով նախնական աշխատանքային պլանները:
3. Վերահսկել արդյունավետ, նպատակաուղղված գործունեություն ծավալելու գործընթացներին ՝կրթության որակի, համայնքում դպրոցի դերի բարձրացման և այլ նպատակներով:
4. Ամրապնդել ծնող-դպրոց-համայնք կապը:

## 1.4 Գնիտման չափանիշներ

| Արդյունքների գնահատման չափանիշները | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| | ա.գործողությու- ները իրականաց- վել են ամբողջու- թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | ա.գործողությու- ները իրականաց- վել են ամբողջու- թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | պլանավորած գործողություն- ները իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ | պլանավորած գործողությու- ները չեն իրականացվել |
| Համագործակցել տարածքային կառավարման մարմինների հետ | | | | |
| Համագործակցել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ | | | | |
| Համագործակցել կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների հետ | | | | |
| Ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի | | | | |

## 1.5 Աշակերտական համակազմ

*Կրթությունը ամենահզոր զենքն է,*
*որը դու կարող ես օգտագործել աշխարհը*
*փոխելու համար:*

*Նելսոն Մանդելա*

Ուսման գործընթացում ամենօրյա զարգացումը անհրաժեշտ է և անխուսափելի, քանզի մեր ապագա քաղաքացին պետք է կրթվի ու դաստիարակվի գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան:

| Իրավիճակի վերլուծություն | |
|---|---|
| **ՈՒժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
| • Տարեկան առաջադիմությունը 100% է:<br>• Նվազել է բացակայությունների թիվը:<br>• Դպրոցում սովորող այլազգի երեխա-ներ, որոնց համար ապահովված են հավասար իրավունքներ և պայման-ներ:<br>• Դպրոցում կան օժտված և շնորհալի աշակերտներ, որոնք ակտիվ մասնակցում են մարզամշակութային միջոցառումների, առարկայական օլիմպիադաների:<br>• Դպրոցն ունի ներառական կրթության փորձ, որը նպաստում է ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքին:<br>• Դպրոցում սովորող բոլոր աշակերտները ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով:<br>• Դպրոցում հաճախակի կազմակերպվում են | • Գերազանց առաջադիմությամբ սովորում է աշակերտների 10%-ը<br>• Տարրական դասարաններում գերազանց սովորողների թիվը ավելին է միջին և ավագ դասարաններում սովորողների թվից<br>• 2022-2023 ուստարին գերազանց ավարտած աշակերտնենը միայն աղջիկներ էին:Գերազանց սովորողների թվի նվազում<br>• Սովորողների բնագիտական առարկաների միջին գնահատականը 7 միավորից ցածր է<br>• Պակասել է մասնակցությունը «Կենգուրու », «Մեղու », «Ռուսական արջուկ » « Կորիզ» և այլ մրցաշարերին<br>• Որոշ աշակենտնեն դուրս են մնում ծնողների վերահսկողությունից, որը բերել էուսման նկատմամբ անտարբերության |

| | |
|---|---|
| դաստիարակության ուղղված տարբեր բնույթի համադպրոցական միջոցառումներ:<br>• Մեծ է կրթությունը միջին մասնագիտական հաստատություններում շարունակող աշակերտների թիվը:<br>• Ակտիվ գործունեություն է ծավալում աշակերտական խորհուրդը:<br>• Աշակերտների ակտիվ ներգրավվածություն արտադասարանական աշխատանքներին և միջոցառումներին | • Բնագիտական առարկաներից օլիմպիադայի մասնակիցներ տարածքային և մարզային փուլերում գրեթե չկան<br>• Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության պակաս |

**Նպատակ 1.5**

**Սովորողների կրթական կառուցվածքի և բովանդակության վերազինում:**

**Կոմպետենտ( կարողունակ ) քաղաքացու ձևավորում**

**Խնդիրներ**

1. Ուսուցման և զարգացման ապահովումը նոր ՀՊՉ-ի և կրթական ծրագրերի շրջանակում (կարողունակությունների զարգացում):
2. Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան:
3. Նորարարական ծրագրերի իրականացում, մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում:
4. Համայնքում բնակություն հաստատած Արցախից բռնի տեղահանված սովորողների ներգրավում և ինտեգրում:

**Գործողություններ**

**Խնդիր 1.**

1.2024-2025թթ.
Սովորողներին ծանոթացնել քննադատական մտածողության և ճանաչողական մեթոդներին ու ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողունակություններ և հմտություններ:
Զարգացնել՝
ա.հաղորդակցման կարողություններ և հմտություններ:
բ.Համագործակցային

**Խնդիր 2.**

2024-2029թթ.
Ուսուցման հետ զուգահեռ կազմակերպում՝
1.հայրենասիրություն
2.մարդասիրություն
3.քրիստոնեական
4.ֆիզիկական
5.գեղագիտական
6.մշակութային
7.աշխատանքային դաստիարակություն
8.սեռական

**Խնդիր 3.**

1.2024-2029թթ.
Անհատական ուսուցման կազմակերպում և վերահսկում:
2. 2025թ.
«Շրջված դասարան» մեթոդի կիրառում:
3. 2025-2029թթ.
Ուսուցման մեջ ներդնել առարկայական էլեկտրոնային դասեր (ԿԳՄՍՆ-ի էլեկտրոնային

**Խնդիր 4.**

1.2024-2025թթ.
Արցախից բռնի տեղահանված աշակերտների ինտեգրում:

| | | | |
|---|---|---|---|
| կարողություններ և հմտություններ:<br>գ.Ստեղծագործական, քննադատական կարողություններ և հմտություններ:<br>դ.Ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ: | դաստիարակություն:<br><br>2024-2029թթ<br>Սովորողների մոտ իրենց նախասիրություններին համապատասխան կարողությունների զարգացում՝ արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների մատուցում | կրթական նյութեր, պաշարների շտեմարան էջից):<br>4.2024-2029թթ.<br>(անհրաժեշտության դեպքում)<br>Կազմակերպել հեռավար ուսուցում: | |

## Ռիսկերը

- Ուսման նկատմամբ աշակերտների անտարբերություն
- Մոտիվացիայի պակաս
- Խթանող ազդակների բացակայություն
- Ֆինանսական միջոցների բացակայություն

## Ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

- Մանկավարժների պրոֆեսիոնալ մոտեցում՝ աշակերտների նախասիրությունների հայտնաբերման նուսումնական տարբեր խմբակներում նրանց ընդգրկման գործում
- Երեխաներին արտադպրոցական խմբակներում ընդգրկում

- Մոտիվացնող միջոցառումների ձեռնարկում՝ աշակերտների հաջողությունների լուսաբանում , պատվոգրերով , խրախուսման այլ միջոցներով պարգևատրում
- Սովորողների ինքնավարության զարգացմանն ուղղված աշխատանքների խթանում
- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը

## Ակնկալվող արդյունքները

- Ուսման նկատմամբ սովորողների մոտ մոտիվացիայի խթանում
- Ուսումնառության որակի բարելավում
- Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացում, համագործակցությունների շրջանակների ընդլայնում
- Աշակերտների ինքնավարության խթանում
- Արժեհամակարգի ձևավորում
- Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից

## Վերահսկողություն

- Գիտելիքների պարբերաբար ստուգում:
- Վերահսկել յուրաքանչյուր գործողության կատարման ընթացքը, արդյունքների վերլուծությունը և շարունակականության պահպանումը:
- Կրթական ծառայությունների որակի բարձրացում
- Կրթական գործընթացի պատշաճ իրագործում
- Որակյալ կրթական ծառայությունների համար անհրաժեշտ միջոցներ, առաջադեմ, տարբեր մրցույթների, օլիմպիադաների մասնակցող սովորողներ

## 1.5 Գնիտման չափանիշները

| Արդյունքների գնահատման չափանիշները | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| | ա.գործողությու-ները իրականաց-վել են ամբողջու-թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | ա.գործողությու-ները իրականաց-վել են ամբողջու-թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | պլանավորած գործողություն-ները իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ | պլանավորած գործողությու-ները չեն իրականացվել |
| Ուսուցման զարգացման ապահովումը  նոր ՀՊՉ-ի և կրթական ծրագրերի շրջանակում ( կարողունակությունների զարգացում) | | | | |
| Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան | | | | |
| Նորրրոկան ծրագրերի իրականացում, մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում | | | | |
| Համայնքում բնակաություն հաստատած Արցախից բռնի տեղահանված սովորողների ներգրավում և ինտեգրում | | | | |

## 1.6 Մանկավարժական

## համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Դպրոցի ուսումնադաստիրակչական գործունեության կենտրոնական դեմքն ուսուցիչն է, իսկ կրթակարգի ներդրման հաջողության հիմնարար գործոնը ուսուցիչների մասնագիտական կատարելագործման արդյունավետ իրականացումը: Այսօր մեր հանրապետությունը թևակոխ է կրթության բովանդակային բարեփոխումների նոր փուլ: Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Մերօրյա ուսուցիչը իր գիտելիքները, վարպետությունը և կարողունակությունները հարստացնելու խնդիրներ ունի:

Կադրերն ու նրանց նկատմամբ վարվող քաղաքականությունը յուրաքանչյուր գործընթացում առանցքային դերակատարություն ունեն: Դպրոցի կառավարման գործընթացների արդյունավետությունն անմիջականորեն բխում է նաև դպրոցի տնօրենի վարած կադրային քաղաքականությունից: Անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ առկա մեխանիզմների շրջանակներում դպրոցի տնօրենի կողմից անհրաժեշտ է հետևողական քայլեր ձեռնարկել անձնակազմի կառավարման գործընթացներն առավել բարելավելու ուղղությամբ, ինչը ենթադրում է հետևյալ ուղղություններով միջոցառումների իրականացում`

- ✓ կադրերի համալրում` ելնելով անձնակազմի երիտասարդացման օբեկտիվ անհրաժեշտությունից մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացվում է արդարացի և բարեխիղճ եղանակով՝ սահմանված ընթացակարգերի համաձայն, ապահովվելով գործընթացների թափանցիկությունն ու արդարությունը
- ✓ թափուր տեղի մրցույթի արդյունքում դրա չհամալրման պարագայում առարկայի ուսուցման շարունակականությունն ապահովելու նպատակով արդյունավետ կիրառվում են օրենսդրության շրջանակներում նախատեսված գործիքակազմերը
- ✓ մանկավարժական անձնակազմի պարբերական վերապատրաստումներ
- ✓ դասաբաշխումներն իրականացվում են կրթության որակի բարելավման և արդյունավետության բարձրացման սկզբունքներից ելնելով, դրանց կազմման սկզբունքները թափանցիկ են և ընկալելի գործընթացի բոլոր մասնակիցների համար
- ✓ սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում
- ✓ մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում ՝ տարվա կտրվածքով
- ✓ անձնակազմի գործունեության խրախուսում ( կամավոր ատեստավորման արդյունքում աշխատավարձի զգալի աճ, պաշտոնական աճ, տարատեսակ պարգևատրումներ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, մասնագիտական և կազմակերպական խրախուսում
- ✓ համապատասխան ռեսուսների առկայության դեպքում փորձի փոխանակման և վերապատրաստման միջոցառումների իրականացում ոլորտի լավագույն մասնագետների հետ:

<table>
<tr><th colspan="2">Իրավիճակի վերլուծություն</th></tr>
<tr><th>ՈՒժեղ կողմ</th><th>Թույլ կողմ</th></tr>
<tr><td>1. Դպրոցի տնօրինությունն ունի դպրոցի ղեկավարման և կառավարման անհրաժեշտ պատրաստվածություն, տիրապետում է դպրոցի ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին:<br>2. Դպրոցում հետևողականորեն իրականացվում են զարգացման ծրագրի տեսլականից բխող :ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում և կազմակերպում:<br>3. Դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ, աշխատանքի արդյունքները տեսանելի են բոլորին:<br>4. Դպրոցն ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում:<br>5. Մանկավարժական անձնակազմն ունի համապատասխան բարձրագույն մանկավարժական որակավորում( բացի զինղեկից,ով ունի միջին մասնագիտական կրթություն և մասնակցել է կամավոր ատեստավորմանն ու ապահովել է 70% արդյունք):<br>6. Դպրոցի տնօրենը աջակցում է ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական և կամավոր ատեստավորումներին, ինչպես նաև տարակարգ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ աշխատանքների կատարմանը<br>7. Ուսուցիչներից երեքը մասնակցել են կամավոր ատեստավորմանը և ցուցաբերել են 90%-ից և 70%-ից բարձր արդյունքներ:Նրանց օրինակին մտադրված են հետևել նաև այլ ուսուցիչներ:<br>8. Հաճախակի են կազմակերպում բաց դասեր բազմազան մեթոդների, ՏՀՏ-ների կիրառմամբ:<br>9. Ուսուցչական համակազմի մեծ մասն ունեն երկարամյա փորձ, մասնագիտական բարձր կարողություններ, տիրապետում են ժամանակակից մեթոդներին, կիրառում են դիդակտիկ պարագաներ, դասը վարում ուսանելի ինտերակտիվ մեթոդներով, անցել են վերապատրաստում, ապահովված են</td><td>1. Նոր չափորոշիչներով աշխատելու փորձի պակաս<br>2. Ուսուցիչների միջին տարիքային ցուցանիշը խոչընդոտում է՝<br>ա. նոր տեխնոլոգիաներն ամենօրյա դասապրոցեսում(ՏՀՏ ոչ լիարժեք տիրապետում<br>բ. թույլ սովորողների խրախուսման համար անհրաժեշտ համատեղ ուսուցման մեթոդներն ու հնարքները:<br><br>3. Ուսուցիչները ցանկություն չունեն տարակարգ ստանալու և ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող «Տարվա լավագույններ» մրցույթին:<br>4. Վերապատրաստող ուսուցիչների պակաս (ընդամենը մեկ ուսուցիչ)<br>5. Մենթոր ուսուցիչների բացակայություն<br>6. Սովորողների գնահատման գործընթացում դեռևս հանդիպում են որոշ անհամապատասխանություն: Միջին դպրոցական տարիքում, քանի դեռ սովորողների մոտ չի ձևավորվել գիտակցական մոտեցում ուսման նկատմամբ, գնահատականը կարևոր դեր է կատարում: Շռայլելով գնահատականը և շեղվելով գնահատման չափանիշներից էապես իջնում է սովորողների մոտիվացիան,քանզի նրանք ձգտում են հեշտությամբ և մակերեսային գիտելիքներով ստանալ բավարար գնահա-տականներ: Սա բերում է ծուլության և ուսման նկատ-մամբ անտարբերության:<br>7. Շարունակական ոլորտային փոփոխությունների վերաբերյալ իրազեկվածության պակասը<br>8. Անհրաժեշտություն կա ստեղծել ու պահպանել համակարգված սեփական ռեսուրսներ<br>9. Օրինակելի իրավական ակտերի քննարկման ներկայացված նախագծերում առաջարկներ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| ծրագրերով, կազմակերպում են փորձի փոխանակում և մեթոդական զեկուցումներ, համագործակցում են միմյանց հետ, փորձի փոխանակման համար անում են փոխադարձ դասալսումներ: Սկսնակ ուսուցիչները աշխատում են նրանց հոգատար ընկերակցությամբ:<br>10. Կա համագործակցային միջավայր, որի ապացույցն են ինտեգրված դասերը, միջառարկայական կապերի վրա հիմնված համակցված դասերը, համատեղ միջոցառումները<br>11. Մանկավարժները հիմնականում պատրաստակամ են կատարելագործել գիտելիքները, ուսուցման մեթոդները՝ ժամանակի պահանջին բավարարող կրթության ապահովման նպատակով<br>12. Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգին համաձայն: Դպրոցի տնօրինությունը պարբերաբար իրականացնում է խորհրդատվական և վերահսկողական աշխատանքներ նշված ուղղությամբ<br>13. Մանկավարժները բացառում են երեխաների հուզական և ֆիզիկական բռնությունը:<br>14. Ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներդպրոցական վերահսկողության պլանների առկայություն, պարբերական մշտադիտարկումներ և արդյունքների վերլուծություններ | ներկայացնելու պասիվություն<br>10. Չկան հստակ մշակված խրախուսման չափանիշներ որոնք կշահագրգռեն ուսուցչին<br>➢ Ունենալ առարկայական օլիմպիադաներում հաղթող, կրթական ծրագրերում ակտիվ մասնակցություն ունեցող սաներ<br>➢ Ակտիվորեն օգտագործել ինքնակրթության և ինքնզարգացման հնարավորությունները |

# ՆՊԱՏԱԿ 1.6

Մանկավարժական համակազմի մասնագիտական և դասավանդման որակների կատարելագործում

Ավելի բարձրացնել հասարակության մեջ ուսուցիչների և դպրոցի հեղինակությունը:

## Խնդիրներ

1. Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացմանն, ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում:
2. Մեթոդմիավորումների կողմից ստեղծել առարկայական ռեսուրս կենտրոններ:
3. Ապահովել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունը:
4. Կամավոր ատեստավորում և տարակարգ

## Գործողություններ

### Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացմանն, ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում

1.2025-2029թթ.
Հանձնարարել մ/մ ղեկավարներին հարցը քննարկել մասնախմբի նիստերում:

2 . 2025թ.
Համատեղ կազմել ինքնազարգացման պլանի օրինակելի նմուշ:

3 . 2025թ.
Կազմել հաշվետու-ձևանմուշ:

4. 2025-2029թթ.
- Մեթոդմիավորումների կողմից կազմել ժամանակացույց ինքնազարգացման աշխատանքների արդյունքում հետաքրքրաշարժ թեմաները, ստեղծագործական աշխատանքները ներկայացնելու համար:
- Ուսուցիչների մասնագիտական կարիքների վերլուծություն և դրանց արդյունքների հիման վրա ըստ կարիքի վերապատրաստումների մասնակցություն:

5..2026-2029թթ.
Աջակցել մանկավարժներին մշակելու և տպագրության ներկայացնելու թեմատիկ աշխատություններ և նյութեր

6.2024-2029թթ.
Մանկավարժները կօգտագործեն ձեռքի տակ եղած բոլոր միջոցները՝ յուրաքանչյուր երեխային հասկանալու և գնահատելու համար:

### Մեթոդմիավորումների կողմից ստեղծել առարկայական ռեսուրս կենտրոններ

1.2024թ.
Կազմել ինքնազարգացման աշխատանքի արդյունքում դուրս բերված հետաքրքրաշարժ կարևոր թեմաների ցանկը:

2.2024-2029թթ.պարբերաբար
Նյութերով համալրել ռեսուրս-կենտրոնը (օժանդակ գրականություն, մեթոդական ամսագրեր, էլեկտրոնային կրթական նյութեր, առարկայական ծրագրերի CD-ներ, դիդակտիկ պարագաներ, պաստառներ):

3.2024-2029թթ.մշտապես
Նյութերը համապատասխանաբար օգտագործել դասապրոցեսներում:

4.2025-2029թթ. պարբերաբար
Մ/մ կողմից համադրել միջառարկայական կապը ապահովվող նյութերը , փոխանակել առարկայական ռեսուրս բազան:

5.2024-2029թթ.
Առաջավոր փորձի դասերի կազմակերպում:

6.2024-2029թթ. պարբերաբար
Դպրոցի համար անհրաժեշտ մեթոդական ձեռնարկների և նյութերի ապահովում:

7 . 2024-2029թթ. մշտապետս
Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, օգնության ծրագիր մշակել:

8.2024թ.-ից
3 մեկական մանկավարժով ավելացնել վերապատրաստող ուսուցիչների և մենթորների թիվը, դպրոցը դարձնել նորությունների կենտրոն:

### Ապահովել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունը

1.2024-2025 թթ. պարբերաբար
Ուսումնասիրել ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառումը դասերում:

2.2024-2025թթ. պարբերաբար
Իրականացնել դասերի դիտարկումներ:

3.2024թ.
Ըստ կարողությունների և հմտությունների կազմել ՏՀՏ գիտելիքները խորացնելու աշխատանքի պլանավորում:

4.2024թ.
Կազմել համապատասխան խմբեր ու աշխատանքային ժամանակացույց:

5.2024-2029 թթ. ըստ կարիքի
Իրականացնել դասընթացը:

6.2024-2025թթ.
Արդյունքում ստեղծված նյութերով հարըստացնել ռեսուրս բազան:
Հրավիրել մասնագետներ, կազմակերպել սեմինարներ, դասախոսություններ արդի մեթոդների կիրառման փորձի փոխանակման,գործնական հմտությունների փոխանցման նպատակով:

### Կամավոր ատեստավորում և տարակարգ

1.2024-2029թթ.

Յուրաքանչյուր ուստարի առնվազն մեկ մանկավարժով ավելացնել.
- Կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը
- Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը:

## Ռիսկեր

- Ուսուցիչների պասիվություն, անվստահություն նորարարական մեթոդների արդյունավետությանը
- Մանկավարժական անձնակազմի զգալի մասի մոտ առկա սոցիալ- տնտեսական խնդիրների և աշխատանքի բնույթից բխող ինտելեկտուալ ծանրաբեռնվածության և նյարդահոգեբանական լարվածության բացասական համադրությունը
- Բազմաթիվ ուսուցիչների կողմից դպրոցի առաջարկվող բարեփոխումներում ընդգրկվելու թույլ մոտիվացիան, քանի որ այն պահանջում է մի քանի անգամ ավելի ուժ և եռանդ, որը ցավոք չի ապահովելու մի քանի անգամ ավելի կամ համարժեք ֆինանսական խրախուսում (ֆինանսական միջոցների սակավություն)
- Անհաղթահարելի ուժի առաջացում:

## Ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ

- Նպաստել ուսուցիչների մասնակցությանը վերապատրաստումներին, ատեստացիաներին, ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքներ տանելուն
- Իրականացնել երկարաժամկետ և կարճաժամկետ ծախսերի ու պահանջների վերլուծություն: Առաջնայնությունը տալով այն ծախսերին որոնք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը:
- Մանկավարժական անձնակացմի գործունեության խրախուսում
- Անհաղթահարելի ուժի առաջացման պարագայում ապահովվել վերոհիշյալ աշխատանքների առցանց կազմակերպումը:

## Ակնկալվող արդյունքներ

- Որակյալ և մոտիվացված մանկավարժներ
- Կամավոր ատեստավորված ուսուցիչների թվաքանակի աճ:
- Մանկավարժական համակազմի մասնագիտական և ՏՀՏ իմացության կատարելագործում
- Հեռավար կրթության հմտությունները կատարելագործելու նպատակով կազմակերպված վեբինարներին և սեմինարներին ուսուցիչների մասնակցության նպաստում
- Ներդպրոցական ( և ոչ միայն) էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում և կիրառում
- Խրախուսել, քաջալրել այն մանկավարժներին ովքեր կարողանում են թեմաների ուսուցման հետ միաժամանակ անդրադառնալ դրանց արդիականությանը

## Վերահսկողություն

- Կրթական ծրագրերի իրականացման արդյունքների ամփոփում
- Վերահսկել յուրաքանչյուր գործողության կատարման ընթացքը, արդյունքների վերլուծությունը և շարունակականության պահպանումը:

- Իրականացնել դասալսումներ, բաց դասեր, ցուցադրական դասեր՝ նոր մեթոդներին ծանոթանալու նպատակով: Հետևել որպեսզի հաջողված մոտեցումները կիրառվեն մշտապես:
- Միջոցառումներ ուսուցիչների դերի բարձրացման նպատակով, խրախուսման միջոցների կիրառում:

## 1.6 Գնհտման չափանիշները

| Արդյունքների գնահատման չափանիշները | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| | ա.գործողություն-ները իրականաց-վել են ամբողջու-թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | ա.գործողություն-ները իրականաց-վել են ամբողջու-թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | պլանավորած գործողություն-ները իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ | պլանավորած գործողությու-ները չեն իրականացվել |
| Ուսուցիչների մասնագիտա-կան առաջխաղացմանն, ինք-նազարգացմանն ուղղված աշ-խատանքների կազմակերպում | | | | |
| Մեթոդմիավորումների կողմից ստեղծել առարկայական ռեսուս-կենտրոններ | | | | |
| Ապահովել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունը | | | | |
| Յուրաքանչյուր ուստարի առնվազն մեկ մանկավարժով ավելացնել.<br>• Կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը<br>• Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը: | | | | |

## 1.7 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների նորարարությունների ներկայացում

| Իրավիճակի վերլուծություն | |
|---|---|
| ՈՒժեղ կողմ | Թույլ կողմ |
| ➢ Դպրոցն ապահովված է կաբելային և WIFI ինտերնետ կապով<br>➢ Հաջողությամբ գործում է « Արմաթ» ինժենե-րական լաբորիատորիան:Վերջինիս ներդ-րումը բավականին լուրջ աջակցություն է դպրոցին աշակերտների ապագա մասնա-գիտական կողմնորոշման, տաղանդավոր աշակերտների բացահայտման հարցում<br>➢ Դպրոցը ատենավարությունը իրականացնում emis.am կայքում ՝ էլեկտրոնային տարբե-րակով<br>➢ Դպրոցն օգտվում է էլեկտրոնային տարբեր կրթական հարթակներից՝ Microsoft TEAMS, Google classroom և այլն<br>➢ Ուսուցիչները տեղեկացված են և հաջողու-թյամբ օգտվում են.<br>✓ «Հայկական կրթական միջավայր» պորտալից, որի շնորհիվ կապ է հաստատվում ՀՀ կրթա--կան ողջ համակարգի միջև, տեղեկացվածու-թյուն է ապահովում միջազգային և տեղական կազմակերպությունների հայտարարություն-ների, հաղորդագրությունների, թափուր աշխատատեղերի, հանդիպումների և այլնի մասին:<br>✓ «Պաշարների շտեմարան» կայքերից, որտեղ տեղադրվում են կրթական, ուսումնամեթո-դական էլեկտրոնային պաշարներ<br>✓ «Հեռավար ուսուցում» համակարգը նպաս- | ➢ Ինտերնետի հզորացման հարցը դեռևս լուծված չէ, որի հետևանքով որոշ աշխատասենյակներում և դասասենյակների մի մասում ինտերնետ կապի վատ որակ կամ բացակայություն<br>➢ Կարևորված չէ ՀՀ ԿԳՍՄՆ-ի կողմից երաշխավորված ծրագրերում աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությունը<br>➢ Աշակերտների և ուսուցիչների պակաս հետաքրքրվածություննևն ընդգրկվածություն տարբեր նորարարական ծրագրերին<br>➢ Ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական թերի միջավայր, ժամանակակից սարքավորումների՝համա-կարգիչների և համակարգչային սարքա-վորումների անբավարար քանակ և վիճակ<br>➢ Սմարթ դասասենյակի բացակայություն, իսկ վերջինիս կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ ազատ մտածողությունը<br>➢ Ինտերակտիվ գրատախտակի բացակա-յություն վերջինիս կիրառումը հնարա-վորություն է տալիս սովորողների մոտ ուսումնական գործընթացի ժամանակ ակտիվացնելու վիզուալ հիշողությունը, վերլուծական և ստեղծագործական միտքը<br>➢ Հեռավար դասերի ստեղծման, պաշարների |

| | |
|---|---|
| տում է հեռավար ուսուցման կազմակերպմանը՝ տնային – հիվանդանոցային երկարատև բուժման կարիք ունեցող հիվանդ երեխաների հետ :<br>➢ Ուսումնադաստիրակչական գործընթացում մշտապես կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ ինտերակտիվ վարժությունների, առարկայական սահիկաշարերի պատրաստման և ցուցադրության միջոցով, կազմակերպվում են տեսադասեր, ֆիլմերի դիտումներ, վիկտորինաներ, ինտելեկտուալ զարգացնող խաղեր<br>➢ Լաբորատորիաների բացակայությունը ուսուցիչները փորձում են լրացնել «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» կայքի պատրաստի ցուցադրությունների և գործնական աշխատանքների առցանց ռեսուսները օգտագործելով<br>➢ ՏՀՏ տեխնոլոգիաները դասապրոցեսի ընթացքում կիրառվում են նաև միավորային և ձևավորող գնահատում իրականացնելու նպատակով<br>➢ Շարունակական աշխատանք է տարվում դասավանդման ավանդական մեթոդների արդյունավետությունն բարձրացնելու նպատակով՝ նոր մոտեցումների ներդրման, ՏՀՏ գործիքների իմացության կատարելագործման ուղղությամբ<br>➢ Դպրոցի թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները և այլ անհրաժեշտ տեղեկատվություններ սահմանված կարգով տեղադրվում են դպրոցի պաշտոնական կայքէջում:<br>➢ Դպրոցի հաշվապահական հաշվառման | հավաքագրման, ըստ առարկաների տեսակավորման բացակայություն.<br>➢ ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների, նորագույն սարքավորումների ու նյութատեխնիկական բազայի բացակայություն<br>➢ Ֆինանսական սղության պատճառով դպրոցը չի կարողանում ձեռք բերել տեխնոլոգիական նոր ռեսուսներ՝ դասերի ավելի արդյունավետ կազմակերպման համար<br>➢ Դպրոցի բոլոր աշակերտներին (առաջիկայում գոնե 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանի աշակերտների համար) դասասենյակներում համակարգիչներով կամ գոնե պլանշետներով ապահովելու հնարավորության բացակայություն<br>➢ Ելնելով արտակարգ իրավիճակներում հեռավար ուսուցում կազմակերպելու հրամայականից անհրաժեշտ է ուսուցիչների մոտ բարելավել տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատանքի հմտությունները<br>➢ Դեռևս կան փոքրաթիվ ուսուցիչներ, որոնք չունեն ՏՀՏ գործիքների բավարար տիրապետման մակարդակ, առցանց աշխատանքի համար անհրաժեշտ բավարար հմտություններ և հաճախ բախվում են նոր տեխնոլոգիաներին հարմարվելու դժվարություններին, որոնք պահանջում են լրացուցիչ աջակցություններ, վերապատրաստումներ<br>➢ Հեռահաղորդակցման տեխնիկական միջոցների բացակայություն կամ անբավարար որակ<br>➢ Ուսուցիչների համար հեռավար ուսուցման վերաբերյալ ոչ բավարար ծավալով/քանակով անցկացված համապատասխան վերապատ- |

| | |
|---|---|
| վարումը /ՀԾ/ և ֆինանսական հաշվե-տվությունների կազմումը, գրադարանի դասագրքեի ֆոնդի հաշվառումը և վարումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով<br>➢ Ներկայումս սպրոցական միջոցառումների, մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ օգտագործվում են ՏՀՏ-ների միջոցներ, սակայն առաջիկա հինգ տարիների ընթացքում նշված կիրառմանը պետք է հաղորդել որակապես ու սկզբունքային առումով բոլորովին նոր լուծումներ<br>➢ Դպրոցի ֆեսբուքյան էջում լուսաբանվում են իրականացված միջոցառումները, ուսուցիչների և աշակերտների հաջողություններն ու ձեռքբերումները, դպրոցի անցուդարձից հետաքրքիր դրվագներ: | բաստումներ<br>➢ Հեռավար կրթության իրականացման սահմանափակ գործիքների ու առցանց հարթակների կիրառում<br>➢ Մեդիագրագիտության ցածր մակարդակ<br>➢ Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար հագեցված ռեսուրս – կենտրոնի, խելամիտ հարմարեցումների բացակայություն<br>➢ Գրադարանային ֆոնդը թվայնացված չէ<br>➢ Էլեկտրոնային գրքերի, էլեկտրոնային ընթերցասրահի բացակայություն |

**Նպատակ 1.7**



համագործակցելով ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի և այլ կազմակերպություննների հետ:
2.2024թ.

Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարների, քննարկումների անցկացում
3.Մշտապես

Արդի աշխարհի փոփոխություններին ու իրողություններին իրազեկվածության բարձրացում
4. 2024-2029թթ

Մշտադիտարկումների իրականացում.
- Մնացորդային գիտելիքների ստուգում
- Հայտորոշիչ աշխատանքների կատարում

ներդնում
3.2024-2029թթ

Իրականացնել ներդպրոցական վերահսկողություն, Դասալսումներ, վերհանել խնդիրները, կարգավորել դրանք:
4.2024-2029թթ

Ձևավորել եկարօրյա խմբակներ չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար
5. 2024- 2029

Մուլտիմեդիա ձևաչափով հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերի օգտագործում
6. 2024-2029թթ.

Հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների օգտագործում, առցանց դասընթացների կազմակերպում
7. 2024-2029թթ

Հեռավար դասավանդման վերաբերյալ ուսուցիչների տարեկան 20%- ի վերապատրաստում

- Քիմիայի լաբորատորիա
- Ֆիզիկայի լաբորատորիա
- Կենսաբանության լաբորատորիա

2.2024-2028թթ

Էլեկտրոնային կրթական ռեսուրսների ստեղծում և կիրառում
3.2024-2029թթ

Դասավանդած թեմայի հետ արդիական թեմաների ( օրինակ՝ մեդիագրագիտություն, կիբերանվտանգություն, բուլինգ, թրաֆիքինգ, ձեռնարկատիրություն, ֆինանսական պլանավորում և այլն) կապում և ուսուցանում:
4.2024-2029թթ

Նպաստել դասավանդման գործընթացում գործնական ուղղվածության ուժեղացմանը, մասնավորապես՝ ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում
5. 2024թ

Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների հաշվառման էլեկտրոնային համակարգի ներդնում

## Ռիսկեր

- Շենքային պայմանների անհարմարություն
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն
- Նորարար ուսուցիչների պակաս
- Ուսուցիչների մոտիվացիայի պակաս
- Անհաղթահարելի ուժի առաջացում:

## Ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողությունները

- Ռեսուրսների արդյունավետ կառավարում

- Խրախուսման տարբեր միջոցներով ուսուցիչների մոտիվացնում
- Անհաղթահարելի ուժի առաջացման պարագայում ապահովել վերոհիշյալ որոշ աշխատանքների առցանց կազմակերպում
- Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում:

## Ակնկալվող արդյունքներ

- Ունենալ ժամանակակից, չափորոշչային պահանջներին բավարարող կրթական միջավայր:
- Չափորոշչային պահանջների ներդրում դասապրոցեսում
- Վերջնարդյունքների գնահատում, մնացորդային գիտելիքների ստուգում:
- Ունենալ հեռավար դասավանդման հմտություններին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ և աշակերտներ:
- Ունենալ փորձառու, չափորոշչային պահանջներին տիրապետող հմուտ մասնագետներ:
- Դասավանդման գործնական ուղղվածության ուժեղացում
- Ունենալ մեդիագրագետ հմտություններին տիրապետող ուսուցիչներ և սովորողներ:

## Վերահսկողություն

- ՏՀՏ միջոցների լիարժեք կիրառում:
- Իրականացնել դասալսումներ, բաց դասեր, ցուցադրական դասեր՝ նոր մեթոդներին ծանոթանալու նպատակով: Հետևել որպեսզի հաջեղված մոտեցումները կիրառվեն մշտապես:

## 1.7 Գնհտման չափանիշները

| Արդյունքների գնահատման չափանիշները | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| | ա.գործողությու-ները իրականաց- վել են ամբողջու-թյամբ բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | ա.գործողությու-ները իրականաց- վել են ամբողջու-թյամբ բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | պլանավորած գործողություն-ները իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ | պլանավորած գործողությու-ները չեն իրականացվել |
| Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում | | | | |
| Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում | | | | |
| Ժամանակակից տեխնոլոգիաների և | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| լաբորատորիաների ներդնում | | | | |
| Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում | | | | |
| Էլեկտրոնային ինտերակտիվ դասերի վարում | | | | |

## 1.8 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

*Կրթությունը գիտելիքների քանակը չէ,*
*այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ*
*կիրառումն այն ամենի, ինչ գիտես:*

*Ադոլֆ Դիստերվիգ*

Ուսման գործընթացում ամենօրյա զարգացումն անհրաժեշտ է և անխուսափելի, քանզի մեր ապագա քաղաքացին պետք է կրթվի և դաստիարակվի գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան:

| Իրացիճակի վերլուծություն | |
|---|---|
| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| • Հանրապետական չափորոշչի պահանջներին համապատասխան, հավասարապես հասանելի, մասնակցային, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովում:<br>• Դպրոցի առաջին, երկրորդ և երրորդ կրթական աստիճաններում կրթությունն իրականացվում է չափորոշչային պահանջներին համապատասխան, ապահովվելով հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչների՝ գիտելիքի, հմտության,դիրքորոշման, արժեքի նվազագույն վերջնարդյունքները:<br>• Ուսուցիչները և մյուս մանկավարժական աշխատողները նոր չափորոշիչների փուլային ներդրմանը պատրաստ լինելու նպատակով ծանոթացել են նոր իրավակարգավորումներին, մասնագիտական և մեթոդական պատրաստվածության բարձրացման համար մասնակցել են տարբեր վերապատրաստումների, այդ թվում ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացված, զբաղվում են ինքնակրթությամբ :<br>• Ուսուցիչները պատրաստ են սովորել, կատարելագործել իրենց մասնագիտական կարողությունները և լավագույնս ապահովել իրենց առջև դրված նպատակների և խնդիրների | • Նոր չափորոշչին անցմամբ պայմանավորված որոշակի դժվարություններ<br>➢ նոր պահանջներին ուսուցիչների աշխատելաոճի անհամապատասխանությունը<br>➢ որոշ ասագրքերի բացակայությունը<br>• Այլ դպրոցների հետ համատեղ մեթոդմիավորումների բացակայություն:<br>• ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն:<br>• Գերազանց առաջադիմությամբ սովորում է աշակերտների 10%-ը:<br>• Տարրական դասարաններում գերազանց սովորողների թիվն ավել է միջին և ավագ դասարաններում սովորողների թվից:<br>• Գերազանց սովորող աղջիկների թիվը ավել է տղաների թվից:<br>• Սովորողների բնագիտական առարկաների միջին գնահատականը միավորից ցածր է: |

| | |
|---|---|
| իրագոր-ծումը։<br>• Համաձայն հանրակրթական նո չափորոշչի իրականացվում է միավորային և բնութագրիչ-ներով ( առաջին և երկրորդ դասարաններում) գնահատում՝ պահպանելով գնահատման չափանիշները պայմանավորված կրթության որակի բարձրացմամբ։<br>• Առարկայական թեմատիկ պլանները կազմված են նոր չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան ։<br>• Կարողունակությունների վրա հիմնված կրթու-թյան կազմակերպում։<br>• Խստիվ պահպանվում են գնահատման չափանիշները՝ կրթության որակի բարելավմամբ պայմանավորված<br>• Ըստ հանրակրթության նոր չափորոշչի՝ իրա - կանացվում է միավորային և ոչ միավորային ( 2-րդ դասարան) գնահատում։<br>• Տնօրինության և մ/մ կողմից պարբերաբար կատարվում են դասալսումներ մշտադիտար-կումներ առարկաների դասավանդման դրվածքի ուսումնա- սիրությունների, ուսուցիչներին մեթո-դական օգնություն ցուցաբերելու նպատակով, քննարկվում են չափորոշչային նոր պահանջների առանձնահատկությունները։<br>• Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ մնացորդային գիտելիքները ստուգելու համար։<br>• Տարեկան առաջադիմությունը 100% է։<br>• Դպրոցը կարևորում է դասավանդման գործնա-կան ուղվածության բաձրացումը, երբ սովո-րողները կապ են տեսնում ուսուցման և կյանքի հետ, գիտակցում են ձեռք բերած գիտելիքների պահանջվածությունը։<br>• Նվազել է բացակայությունների թիվը։<br>• Դպրոցում սովորում են այլազգի 6 երեխաներ, որոնց համար ապահոված են հավասար իրա-վունքներ և պայմաններ։<br>• Դպրոցում կան օժտված և շնորհալի աշա-կերտներ, որոնք ակտիվ մասնակցում են մարզա-մշակութային միջոցառումների, առարկայական օլիմպիադաների։<br>• 6-12 դասարանների գրեթե բոլոր աշակերտները տիրապետում են ՏՀՏ-ներին։<br>• Դպրոցն ունի ներառական կրթության փորձ, որը նպաստում է ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքին։<br>Դպրոցում սովորող բոլոր աշակերտներն ապահոված են դասագրքերով, գրենական պիտույքներով։<br>• Դպրոցում հաճախակի կազմակերպվում են դաստիարակությանն ուղված տարբեր բնույթի | • Պակասել է մասնակցությունը «Կենգուրու», «Մեղու» և այլ մրցաշարերին։<br>• Որոշ աշակերտներ դուրս են մնում ծնողների վերահսկողությունից, որը բերել է ուսուցման նկատմամբ անտարբերության։<br>• Որոշ աշակերտների շրջանում ինքնարտահայտման, համար-ձակության պակաս։<br>• Որոշ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրվածության պակաս, հատկապես միջին և ավագ դասարաններում։<br>• Օլիմպիադայի մասնակիցներ մարզային փուլում գրեթե չկան։<br>• Աշակերտների միջոցառումներին ներգրավվածության պակաս |

| | |
|---|---|
| համադպրոցական միջոցառումներ:<br>• 2018-2023 թթ. բուհ ընդունվել են 60% աշակերտ, ՆՄՈՒՀ՝ 2% աշաերտ, ՄՄՈՒՀ՝ 30%աշակերտ:<br>• Ակտիվ գործունեություն է ծավալում աշակեր-տական խորհուրդը:<br>• Աշակերտների ակտիվ ներգրավվածություն արտադասարանական աշխատանքներին և միջոցառումներին:<br>• Ընթերցանությունը դպրոցում ավելացել է, ունեցել ենք գրադարանի համալրում՝ բազմաթիվ հետաքրքիր գրքերով որոնք էլ ավելի են ավելացրել ընթերցասերների թիվը: | |

## Նպատակ 1.8

**ՀՊՉ-ով սահմանված միջնակարգ դպրոցի շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջների, կարողունակությունների և**

**Հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովում**

**Կրթության որակի բարձրացում**

### Խնդիրներ

1. Պահպանել չափորոշ-չային պահանջներին համապատասխան վերջնարդյունքների գնահատման չափանիշ-ները և մնացորդային գիտելիքների ստուգումը
2. Չափորոշչային պահանջների ներդրում դասապրոցեսում աշակերտների կողմից գիտելիքի յուրացման գործընթացի վերահսկողություն
3. Դասավանդման գործնական ուղվածության ուժեղացում

### Գործողություններ

**1.** 2024-2029թթ. մշտապես

- Կրթության որակի բարձրացման համար նոր չափորոշչով պայմանավորված՝ տարրական դասարաններում և 5-րդ դասարանի I կիսամյակի գնահատումը կատարվելու է (աստիճանաբար մինչև 2027թ. ) բնութագրման միջոցով
- ➢ Անհրաժեշտ է, որ ուսուցիչները նկարագրման մեջ օբյեկտիվորեն արտացոլեն սովորողների գիտելիքները
- ➢ Միջին դասարաններում գնահատման չափանիշների պահպանումը թույլ կտա ավազ

**2.** 2024-2029թթ. մշտապես

- Նորագույն տեխնոլոգիաների ներդնում
- Իրականացնել դա-սարանական-ընդհանրական վերահսկողություն։
- Աշակերտների ուսում-նառության արդյունք-ների ուսումնասիրում և ըստ անհրաժեշտու-թյան երկարօրյա խմբերի կազմակեր-պում ։
- Պարզել.
- ➢ Գիտելիքների մակար-

**3.** 2024-2029թթ. մշտապես

- Աշակերտների նախասիրություն-ների ուխսումնա-սիրում և խմբակ-ների ձևավորում
- Միջոցառումների, բաց դասերի, նա-խագծային աշխա-տանքների իրա-կանացում հիշար-ժան իրադարձու-թյուններ, տոների, հիշատակի օրերի հետ կապված
- Անհատական աշ-

| | | |
|---|---|---|
| դպրոցում առավել վստահ և գիտակցված մոտենալ ուսուցման գործընթացին և ապագա մասնագիտության ընտրությանը<br>➢ Մշտադիտարկումների իրականացում<br>➢ Մնացորդային գիտելիքների ստուգում<br>➢ Հայտորոշիչ աշխա-տանքների կատարում | դակը<br>➢ Հմտությունների ու կա-րողունակությունների մակարդակը<br>➢ Ինքնուրույն սովո-րելուկարողությունը:<br>• ՈՒսումնասիրել.<br>➢ Աշակերտների ընդ-գրկվածությունը ուսումնական գործընթացում:<br>➢ Ուսման նկատմամբ վերաբերմունքը<br>➢ Աշակերտների և ուսուցիչների համա-գործակցությունը:<br>➢ Հոգեբանական մթնո-լորտը դասարանում:<br>• Պարբերաբար իրա-կանացնել դասա-լսումներ տնօրենի և մ/մ նախագահների կողմից, դրանց արդյունքների քննարկում մ/մ և ման-կավարժական խոր-հուրդների նիստերում<br>• Անցկացնել ստուգարք առանձին առար-կաներից ձեռք բերված գիտելիքների արդյուն-քները ամփոփելու նպատակով:<br>• Վերահսկողության արդյունքում արձա-նագրված խնդիրների լուծման համար | խատանք առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների հետ<br>• Առարկայական մրցույթների, բանա-վեճերի, քննար-կումների անցկացում<br>• Նպաստել դասա-վանդման գործըն-թացում գործնական ուղղվածության ուժեղացմանը.<br>➢ Ճանաչողական էքս-կուրսիաների կազ-մակերպում |

## Ռիսկեր

- Շենքային պայմանների անհարմարություն
- Ժամանակավրեպ լինելը, շահառուների կողմից խնդրի չկարևորելը
- Անհաղթահարելի ուժի առաջացում
- Ոչ բավարար ֆինանսական միջոցներ

## Ռիսկերի ազդեցությունը մեղմող  գործողությունները

- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում

- Անհաղթահարելի ուժի առաջացման պարագայում ապահովել վերոհիշյալ որոշ աշխատանքների առցանց կազմակերպումը
- ՌԻսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպում
- Պարբերաբար իրականացնել դիտարկումներ շնորհաշատ աշակերտների բացահայտում, օժտված և ԿԱՊԿՈՒ աշակերտների ներգրավվածություն ապահովելու եղանակներ մշակել:

## Ակնկալվող արդյունքներ

- Հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովում յուրաքանչյուր երեխայի համար։

## Վերահսկողություն

- Կրթության որակի ապահովում, կոմպետենտ քաղաքացու ձևավորում:
- Սեփական դիրքորոշում ունեցող, ինքնաքննադատական մտածողություն ունեցող անձի ձևավորում:
- Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն, ապագա քաղաքացու ձևավորում:
- Իրականացնել դասալսումներ, բաց դասերի, համակցված դասերի իրականացում, հետազոտական և գործնական աշխատանքների իրականացում:

## 1.8 Գնահտման չափանիշները

| Արդյունքների գնահատման չափանիշները | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| | ա.գործողությու-ները իրականաց-վել են ամբողջու-թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | ա.գործողությու-ները իրականաց-վել են ամբողջու-թյամբ<br>բ. լիովին ապահովել են ակնկալվող արդյունքները | պլանավորած գործողություն-ները իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ | պլանավորած գործողությու-ները չեն իրականացվել |
| Կրթության որակի բարձ-րացում,որը կնպաստի տարեկան առաջադի-մության բարձրացմանը | | | | |
| Տարրական, հիմնական, միջնակարգ կրթության կարողունակություններին տիրապետող աշակերտներ | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առարկայական օլիմպիա-դաներում բարձր ցուցա-նիշներ | | | | |
| Տարբեր հմտությունների և կարողունակությունների տիրապետող, սեփական կարծիքն արտահայտող, վարկածներ առաջարկող աշակերտներ | | | | |
| Կյանքի հմտություններին տիրապետող աշակերտներ | | | | |
| Երկարորյա խմբերում ընդգրկված աշակերտների մոտ առաջադիմության աճ | | | | |

# 1. 9 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

| Իրավիճակի վերլուծություն | |
|---|---|
| **ՈՒժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
| 1 Դպրոցում<br>➢ Որդեգրված է ժողովրդավարական ոճի կառավարման ձև<br>➢ Խրախուսվում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում<br>➢ Երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական անձնակազմի բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայր:<br>➢ Բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները: Դպրոցում ապահովված է ազատ խոսքի, քննադատական դատողության, նախաձեռնողականության, համագործակցային հարաբերությունների, թիմային աշխատանքի մթնոլորտը:<br>• Բոլոր խորհրդակցական, կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների հիմքում բազմակարծություն, որն ապահովում է տարբեր հարցումների, դիտարկումների և քննարկումների արդյունքում<br>• Որոշումների կայացման գործընթացը ձևավորվում է հանրային քննարկման արդյունքում<br>• Դպրոցի անձնակազմի և բոլոր շահառու կողմերի ներգրավվածությամբ աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների պաշտպանության, բռնության ու հալածանքի ( բուլինգի) ցանկացած ձևի | ➢ Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման մեխանիզմների բացակայություն<br>➢ Որոշ դեպքերում բազմակարծիք և մասնակցային արժեքների ոչ ճիշտ ընկալում<br>➢ Սովորողների կողմից ազատ խոսելու, կարծիք հայտնելու կաշկանդվածություն:<br>➢ Հայրենիքի, ընտանիքի, բնության, ֆիզիկական և հոգեբանական ճնշման, իրավունքների հավասարության, հանդուրժողականության, անվտանգության, առողջ ապրելակերպի, ծխախոտի, ալկոհոլի բացասական ազդեցության, գրքի կարևորության, սոցցանցերում առկա վտանգների թեմաներով զրույցների, տեսահոլովակների դիտումների, բանավեճերի, կլոր սեղանների,քննքրկումների կազմակերպման պակաս:<br>➢ Ծնողների որոշակի խմբերի մասնակցության պասիվությունը կամ պակաս կարևորելը նշված գործընթացին<br>➢ ԿԱՊԿՈւ երեխաների համար խելամիտ հարմարեցումների պակաս:<br>➢ Ներառականության տարբեր դեպքերի հետ կապված ոչ ճիշտ վերաբերմունքի դրսևորումներ<br>➢ Հաճախ խնդիրներ են առաջանում երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացում՝ ծնողները չհասկանալով հրաժարվում են ընդունել |

| | |
|---|---|
| կանխար-գելման, ցանկացած հիմքով խըտ-րական վերաբերմունքը բացա-ռելու ուղղությամբ:<br>• Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն, որի կազմակերպման համար մանկավարժական համակազմը սերտ համագործակցում է ծնողների և ՏՄԱԿ-ի հետ<br>• Դպրոցն ուղղված է  սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում, ըստ կարիքի նկարագրության և հնարավոր զարգացման գործոնի<br>➢ Ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսումնական պլանների,արտադասարանական աշխատանքների կազմակերպման գործընթացում բոլոր շահագրգիռ անձանց ներառակա-նություն<br>➢ Դպրոցում աշխատում է բազ-մամասնագիտական թիմ՝ հոգեբան, ուսուցչի օգնական համագործակցելով ՏՄԱԿ-ի հետ<br>➢ Արտադպրոցական, արտա-դասարանական աշխատանքներում, կազմակերպվող բոլոր միջոցառումներին ներգրավված են ԿԱՊԿՈւ սովորողները<br>➢ Դպրոցի մանկավարժները ար-դիականացնում են իրենց գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում<br>➢ Յուրաքանչյուր մանկավարժի համար դպրոցում ստեղծված է հարմարավետ ստեղծագործա-կան միջավայր:<br>➢ Մշտապես կատարվում է առաջավոր մանկավարժական փորձի (մ/մ նիստերում, գործնական պա-րապունքների, դասալսումների վերլուծության, կոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ):<br>• Դպրոցը աջակցում է համայնքում | գնահատման կարևորությունը, հաճախ խոչընդոտում են հոգեբանի աշխատանք-ներին:<br>➢ Ֆինանսական վիճակի սղություն՝դրամական և նյութական խրախուսումներ տալու համար:<br>➢ Սովորողների կրթական, սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության վերաբերյալ սակավ միջոցառումներ |

| | |
|---|---|
| կազմակերպվող միջոցառումներին։<br>➢ Համայնքապետարանը արժևորում և գնահատում է նրանց աշխատանքը։<br>• Դպրոցը խրարուսում է.<br>➢ մանկավարժների պարբերաբար մասնակցությունը մասնագիտական աճ ապահովող վերա-պատրաստումներին, զանազան ծրագրերին, սեմինարներին<br>➢ Սովորողների ինքնաարտահայտման և ինքնադրսևորման բոլոր փորձերը։<br>• Դասագրքերի զեղչից մշտապես օգտվում են ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները (ընտրությունը կատարվում է հարցը ծնողական, մանկավարժական և կառավար-ման խորհուրդներում քննարկ-վելուց և որոշում ընդունելուց հետո)։<br>• Յուրաքանչյուր ուստարվա սկզբին մանկխորհրդի նիստում քննարկվում և կառավարման խորհրդի հաստատման է ներկայացվում ներքին կարգապահա-կան կանոնները։<br>• Ծնողական խորհուրդները ներ-գրավված են կազմակերպչական գործընթացներում ( էքսկուրսիաներ, արշավներ և այլն)<br>• Դպրոցում պահպանվում է սովորողների և աշխատողների իրավունքները։ Յուրաքանչյուր սովորող տեղեկացված է իր իրավունքների ու պարտակա-նությունների մասին։<br>• Որոշումներ ընդունելիս հաշվի է առնվում բոլորի կարծիքը, քըն-նարկվում են բոլոր առաջարկները<br>• Արտառոց դրսևորումներով սիստեմատիկ բացակայող աշա-կերտներ չկան։<br>• Առկա է անվտանգ՝ առանց բռնու-թյան,առանց հալածանքի, առանց օտարման, առանց ատելության խոսքի, առողջ բարոյահոգեբանական կրթական միջավայր<br>➢ Բռնության դեպքերի կանխարգելման | |

| | |
|---|---|
| գործում ներգրավվում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները, կազմակերպվում են առանձին քննար-կումներ<br>➢ Ուսումնական հաստատության կողմից երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատաս-խանատվության բարձացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման , երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորում<br>• Անհատի ինքնաբացահայտման և ինքնակայացման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ<br>• Վերոհիշյալները ժողովրդավարության գործիքներ են, նպաս-տում են սովորողների ըստ չափորոշիչների կարողունակու-թյունների ձևավորման զարգաց-ման, որակյալ վերջնարդյունք-ների ապահովմանը, ինչպես նաև աշխատակիցների և սովորողների սոցիալական, առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանությանը: | |

Նպատակ 1.9

**Բազմակարծիք, ներառական և մասնակցային կառավարման ապահովում և դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում**

**Խնդիրներ**

**2024-2029 մշտապես**
Մասնակցային կառավարման ապահովում

**2024-2029 մշտապես**
Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում
Դպրոցի բոլոր տեսակի պլանների մշտական վերահսկողություն

**2024-2029 մշտապես**
Ներառական կրթության ապահովում
Հալածանքի, ոտնձգության և բռնության կանխարգելում

**Գործողություններ**

- Խրախուսել սովորողների նախաձեռնողականությունը
- Ապահովել թափանցիկ և բաց կառավարում՝ խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավմամբ և տեղեկատվական հաղորդակցման՝ մասնավորապես դպրոցի կայքի միջոցով
